9346




Ռ. Գ. ՌՈՒԲԵՆ

# ՍՈՒՏԿԱՑՈՒՄ ՄԻՋԻՆ ՀԱՇՎՈՎ 50.000 ՏՈՆՆ ՆԱՎԹԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

ЗКП5
Д-81

24 JUL 2013

25 SEP 2006

1 DEC 2009

Ռ-81

1008
38598

3099

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

Ռ. Գ. ՌՈՒԲԵՆ

# ՈՐԵԿԱՆ ՄԻՋԻՆ ՀԱՇՎՈՎ
# 50,000 ՏՈՆՆ
# ՆԱՎԹԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

(Զեկուցում Ադրկոմկուսի (բ) Բագվի Կոմիտեյի պլենումում Բագվի կազմակերպության ակտիվի հետ միատեղ 1933 թվի օգոստոսի 9-ին):

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ

ԲԱԳՈՒ — 1933

1. Նավթի համար մղվող պայքարում Բագվի կազմակերպության հերթական խնդիրների մասին: (Ընկ. Ռուբենի զեկուցումը Ադրկոմկուսի (բ) Բագվի Կոմիտեյի պլենումում Բագվի կազմակերպության ակտիվի մասնակցությամբ 1933 թվի օգոստոսի 9-ին):

2. Համկոմկուսի (բ) Անդրյերկրկոմի, Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի ու Բագկոմի բյուրոների միացյալ նիստի վորոշումը (հավանություն ե գտել Ադրկոմկուսի (բ) Բագկոմի պլենումի ու Բագվի կազմակերպության ակտիվի կողմից 1933 թ. օգոստոսի 9-ին.

3. Ծանր Արդյունաբերության ժողկոմատի 1933 թ. օգոստոսի 2-ի № 627 հրամանը.

Главлит № 4754 Партиздат № 25 Ст-ф 364 Б-6. Зак № 2808 Тир. 1600
Тип. „III Интернационал" Бакполиграфа БМП. Баку, ул. Сарат. Ефим. 37.

# ԲԱԳՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՆԱՎԹԻ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

(Զեկուցում Ադրկոմկուսի (բ) Կոմիտեյի պլենումում Բագվի կազմակերպության ակտիվի հետ միասին 1933 թ. օգոստոսի 9-ին)

*Ընկերներ, առաջին կիսամյակում Բագվի կազմակերպության առաջ դրված եր անցյալ տարվա սխալներն ուղղելու, արագությամբ վերակառուցվելու խնդիրը — վերականգնել այն, ինչ վոր բաց ե թողված և այնպիսի հաստատուն գիծ վերցնել, վոր կատարվի նավթի պլանը: Այդ խնդիրը Բագվի կազմակերպությունը Անդրյերկրկոմի, Կենտկոմի ու Բագկոմի ղեկավարությամբ իրականացրել ե, ժամանակից առաջ կատարելով 1-ին կիսամյակի պլանը:*

*Ի՞նչն ե վորոշել նավթի համար մղվող պայքարի հաջողությունն, առաջին կիսամյակում:*

*Առաջինը — անցյալ սխալների արագ վերացումը, իսկական բոլշեվիկյան մոբիլիզացիա՝ պլանի անիրագործելիության մասին յեղած ամեն տեսակ ոպորտունիստական յերերումների դեմ մղվող պայքարում, տնտեսության մեջ միանձնյա ղեկավարության սահմանում, կուսակցական և տնտեսական ուժերի ավելի կանոնավոր դասավորում, և այն պարագան, իսկական բոլշեվիկյան պարագան, վոր վերջին ժամանակներս ստեղծվել ե թե Անդրկովկասում և թե Ադրբեջանում, մեր կուսկազմակերպությունների աշխատանքում: Անշուշտ այդ բոլորը վորոշել են մեր ունեցած հաջողությունները առաջին կիսամյակի մեր աշխատանքում:*

Այսօր այդ մենք ասում ենք ոչ թե նրա համար, որ դուրալի հիշողություններով զբաղվենք, այլ նրա համար, որ հաշվի առնենք 1-ին կիսամյակում կատարված աշխատանքի փորձը, որովհետև 2-րդ կիսամյակում մեր առաջ բարդ, հսկայական խնդիրներ են դրված, պետական մասշտաբի խնդիրներ, որոնց Բաքվի կազմակերպությունը պետք է լուծի՝ ինչ կերպ էլ լինի:

Բայց, ընկերներ, 1-ին կիսամյակում էլ, յերբ նավթն ավելանում էր, կուսակցության Ցենտրկոմը և Կենտկոմն ու Բաքկոմը նախազգուշացրել են Բաքվի բոլշևիկներին ու Բաքվի բոլոր նավթագործներին, թե հորափորման գործում հետ մնալն սպառնալից գործոն է, և որ պետք է բոլոր միջոցները ձեռք առնել հետ մնալը հաղթահարելու համար: Յեվ Անդըրյերկրկոմը, և Կենտկոմն ու Բաքկոմն առանձնապես սուր կերպով են դրել հարցն այն մասին, թե մեր աշխատանքում բոլորովին անթույլատրելի յեն որևէ հանգստացում, անհոգություն: Դուք հիշում եք այդ մասին յեղած բոլոր միանգամայն պարզ որոշումները: Նախազգուշացրել են՝ յուրաքանչյուր հորին ավելի կոնկրետ ուշադրություն դարձնելու անհրաժեշտության մասին, նախազգուշացրել են՝ առաջավոր տեխնիկան արմատացնելու ասպարեզում վճռական աշխատանք տանելու և հակամեքենայացման տրամադրությունների դեմ պայքար մղելու անհրաժեշտության մասին, խոսել են այն մասին, թե ինչը, աշխատանքը պետք է ավելի կազմակերպված, ավելի հրատապ լինի, առանց որևէ ընդհատումների:

Այսօր, յերբ Բաքվի կազմակերպության առաջ մեծ մասշտաբով խնդիր է դրված, մենք չենք կարող աչքաթող անել այն, որ վերջին ժամանակներս վատ ենք աշխատում: Պարզ է, որ այսօր հարկ չկա խոսել մեր աշխատանքում ունեցած հաջողությունների մասին: Այն ինչ մենք նվաճել ենք թե տնտեսական և թե կուսակցական աշխատանքի ասպարեզում, դա մեր



դրսևորումն է. պետք է ամրապնդել այդ գործը. մեր նվաճումները մեզնից ոչ ոք չի խլի: Այսօր, ընկերներ, մենք ամենայն սրությամբ պետք է խոսենք այն թերությունների մասին, որ գոյություն ունեն մեր կուսակցական ու տնտեսական աշխատանքներում: Առանց այդ թերությունները վճռականորեն, համառությամբ վերացնելու՝ մենք հազիվ թե կարողանանք իրագործել այն առաջադրությունները, որ մեզ վրա յեն դնում կուսակցությունն ու յերկիրը:

Այստեղ յես չեմ կրկնի այն բոլորի մասին, ինչ որ քանիցս ասել են կուսակցության Ցենտրկոմը, Կենտկոմն ու Բաքկոմը: Յեկեք թեկուզ հուլիս ամսի փորձով վերլուծման յենթարկենք մեր աշխատանքը: Հուլիսը, դա առաջին ամիսն էր, յերբ անցյալի սխալներն ուղղելուց հետո, մենք, ձեզ հետ միասին՝ պլանը չկատարեցինք: Ինչո՞ւ չկատարեցինք պլանը: Կայի՞ն արդյոք, այդ պլանը չկատարելու օբյեկտիվ պատճառներ: Ոչ, ընկերներ: Այդ հարցի մանրակրկիտ վերլուծումն ասում է այն մասին, որ ոչ միայն պլանը կատարելու բոլոր պայմաններն են յեղել, այլ և յեղել են պլանը գերակատարելու բոլոր պայմանները: Իսկ բանը նրանում է, որ մենք վատ ենք աշխատել:

Կուսակցության Ցենտրկոմի վերջին որոշումը միանգամայն պարզ ու մեկին պատասխան է տալիս այն հարցին, թե իսկապես հուլիսին ի՞նչ է կատարվել մեզնում, և ինչ պետք է անել Բաքվի կազմակերպության մեջ, որպեսզի հուլիսը չկրկնվի:

## ՎԵՐԱՑՆԵԼ ՀՈՐԱՓՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՆԱԼԸ

Յես միայն վճռական հարցերի վրա կանգ կառնեմ. առաջինը, անշուշտ՝ հաջողություններից վորոշ գլխապտույտ է ստացվել, յեռանդի վորոշ թուլա-

ցում, հանգստացման տարրեր թե տնտեսավարների և թե կուսակցական աշխատողների շարքերում: Դա քիչ կարևոր մեծություն չի նավթի համար մղվող պայքարում:

Ինչ վերաբերում է պրոֆմիութենական աշխատողներին, ապա յես կասեյի, վոր նրանք ամբողջ ժամանակին իրենց ցույց տված յեռանդով չեն փայլել աշխատանքում:

ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՑԸ՝ հորատությունն է: Կանգնած ենք միևնույն տեղը: Յեթե դուք հարց տնեք, թե հորատման գործում ինչ առաջադիմություն ենք ունեցել, յես կպատասխանեմ,—կանգնած ենք նույն տեղում: Մեր աշխատանքի այդ վճռական գործոնը դեռ ևս բոլորովին չլուծված է մնում:

Յես չեմ կրկնի, թե ինչո՞ւ յե մեզնում հետ մնալը տեղի ունենում. այդ մասին ասված է Անդրյերկրկոմի, Կենտկոմի ու Բաղկոմի վորոշումներում: Այդ մասին յես մանրամասն խոսել եմ հորատողների Բաղվի համաքաղաքային կոնֆերանսում: Այն բոլորն, ինչ վոր ասված է յեղել առաջ՝ մնում է և այսօրվա համար:

Արդյոք, հորատման պլանը չկատարելու օբյեկտիվ պատճառներ յեղե՞լ են: Պնդում եմ, վոր չեն յեղել: Վորովհետև մենք լավ օրինակներ քիչ չունենք հորատման գործում: Մենք ասում ենք, թե դժվար է յուրացնել խոր հորատման տեխնիկան, թե այդ բանը մեզնում լավ չի յուրացվում, այդ գործը նոր է, վոր 1933 թիվը մասսայական խոր հորատման առաջին տարին է: Այդ բոլորը ճիշտ է: Բայց մի՞թե մենք խոր հորատման աշխատանքի լավ օրինակներ չունինք:

№ 663 հորը, նրա հորատող վարպետն է Լապտևը,—այժմ նրա մասին է գրում ամբողջ համամիութենական մամուլը, և արժանի յե: Հորը հասցված է 1367 մետր խորության: Ինչո՞վ է տարբերվում այդ հորի աշխատանքը մյուսներից: Նրանով, վոր հորատող խումբն աշխատել է ճշտորեն, ազնվությամբ, բարեխղճությամբ, առանց վորևե ավարիաների: Խոր հորը ժամանակին են հանձնել և լավ հոր են տվել: Նշանակում է՝ կարելի յե լավ աշխատել: Նշանակում է կան օրինակներ, վորոնք ցույց են տալիս, վոր աշխատանքի բոլոր ներկա պայմաններում ևս կարելի յե խոր հորատման ասպարեզում լավ աշխատել:

№ 639 հորը,—հորատող վարպետն է Լուպարևը: Հորը հասցված է 1363 մետր խորության: Հորը լավ է փորված, հանձնված է ժամանակին և այժմ յերկրին նավթ է տալիս:

№ 662 հորը, — հորատող վարպետն է Սիլովը, փորված է 1423 մետր և լավ է փորված, հորը հանձնված է ժամանակին, շահագործման է տրված յեվ յերկրին նավթ է տալիս:

№ 473 հորը,— հորատող վարպետն է Լուկյանովը.— հորը հասցված է 1385 մետր խորության. լավ են փորել, հանձնել ժամանակին: Մենք այստեղ միայն կարող ենք «շնորհակալություն» հայտնել Շմիդտի անվան գործարանի ընկերներին, վորոնք այնպիսի սարքավորումներ են տվել, վոր բաց շատրվանը ժամանակավոր կերպով այդ հորը շարքից դուրս է հանել: Առհասարակ Շմիդտի գործարանի ընկերներին այս ակտիվում կարելի յե մի ամբողջ շարք «կոմպլիմենտներ» անել նրանց աշխատանքի համար:

№ 546 հորը,—հորատող վարպետն է Լոնինը: Հորը հասցված է 1389 մետր խորության, հանձնված է ժամանակին, նավթ է տալիս: Այդ բոլորը՝ Որջոնիկիձեյի անվան տրեստում:

Ստալինյան տրեստում՝ №№ 791 և 793 հորերը: № 791 հորը հասցված է 1120 մետր խորության, իսկ № 793 հորը՝ 1134 մետր: Հորատող վարպետն է Ժաբովը: Հորերը լավ են փորված ու ժամանակին հանձնված յերկու հորերն էլ նավթ են տալիս: Յես կարող եյի շատ ազգանուններ թվել մյուս տրեստներից, օրինակ Կագանովիչի անվան տրեստից, վորտեղ հորատող խմբերը լավ են աշխատել, վորտեղ հորատող վարպետները լավ աշխատանք են ցույց տվել:

Նշանակում է, ընկերներ, հորատորման հետ մնալու գործում չկա վոչ մի ուրիշ պատճառ, բացի նրանից, վոր մենք ինքներս ենք վատ ղեկավարում այդ գործը: Մենք չենք կարողանում այնպես անել, վոր №№ 663 և 639-ի պես հորերը տիպիկ լինեն մեր աշխատանքում: Դեպքեր են յեղել, յերբ վոչ այդպիսի խոր, այլ մի քանի անգամ պակաս խորություն ունեցող հորեր, թափթփվածության, գործը վատ կազմակերպելու պատճառով՝ շարքից դուրս են յեկել: Իսկ դա յերկրին ահագին վնաս է հասցնում:

Հուլիսյան անախորժության առաջին պատճառը— հորատորման ասպարեզում հետ մնալն է: Մեզ մոտ յեղել են այնպիսի ռայոններ, վորոնք հուլիսին վոչ մի նոր նավթահոր չեն տվել: Իսկ ահա Օրջոնիկիձեյի ռայոնում ղեկավարները, և առաջին հերթին՝ ընկ. Բորցն,— ընկ. Պետրոսյանը, ընկ. Մակարովը և ուրիշ շատ ընկերներ կոմաքիլի խորության հորերը նվաճելու գործում աշխատանքի օրինակներ են ցույց տվել և շատ ռայոններ նրանցից պետք է սովորեն, թե ինչպես պետք է հաստատուն, համառ, յեռանդուն կերպով կատարեն աշխատանքը: Օրջոնիկիձեյի ռայոնի կուսակցական կազմակերպությունը, բոլշևիկներն ու պրոլետարները ցույց են տվել, վոր իրենք կարող են լավ աշխատել:

Մենք, ընկերներ, պետք է մի անգամ ևս իր ամբողջ հասակով դնենք հորատորման հարցը, և պետական նոր, ահագին կարևորություն ունեցող խնդիրների առնչությամբ՝ հորատորման հետ մնալը պետք է լիկվիդացիայի յենթարկենք:

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀՈԳԱՏՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆ ՄԻ ՀՈՐԻ

Բայց հուլիսին մենք վատ ենք աշխատել վոչ միայն նրա համար, վոր հորատորությունը յետ եր մնում: Մենք վատ ենք աշխատել և նրա համար, վոր



աշխատանքն զգալի կերպով թուլացել է և շահագործման ասպարեզում:

Ամեն մի հորի համար պայքար չի տարվել, վորի մասին մենք շարունակ խոսում ենք: Թափթփվածություն, թույլ ուշադրություն տեխնիկական հարցերին մեքենայացրած նավթահանության վերաբերմամբ: Նայեցեք թե մեզնում ինչ վիճակում է կոմպրեսորային տնտեսությունը, և չէ՞ վոր նա մեծ չափով վորոշում է մեքենացրած նավթահանության նորմալ աշխատանքը և դուք կհամոզվեք, վոր այդ գործը մենք չափազանց վատ ենք ղեկավարում: Բարձր տեխնիկա ունենք և այդպիսի հանգամանքներում մենք կուստար կերպով ենք աշխատում:

Յես ընդհանրապես պետք է ասեմ, վոր մեզ մոտ շահագործման մեջ նյութական-տեխնիկական բազան խիստ ցածր մակարդակի վրա յէ:

Բացի շահագործման մեջ տեխնիկական անբավարար սպասարկումից, վոր կապված է տեխնիկական խիստ թույլ բազայի հետ (Շմիդտի գործարանն ընդամենը 3–4 տարեկա յէ պատրաստում շահագործման համար — շատրվանային արմատուրա, կոմպրեսորներ, շտանգներ, ելեվատորներ և այլն: Ձերժինսկու գործարանը—խորաքաշ նասոս, «Բակ. Բար.» գործարանը—կաչալկա, ստանոկներ և նրանց պահեստամասեր), գետնի յերեսի պատրաստի մեքենասարքը բավականաչափ ռացիոնալ կերպով չենք օգտագործում, այսինքն նրա փորձաշարժերը բավականաչափ համաչափորեն չեն կատարվում: Խնդիրը կանգ է առնում գըլխավորապես մոնտաժ-նորոգման բրիգադների թուլության պատճառով, վորոնք ներկայումս կազմակերպված են հետևյալ նավթահանքերում. 100 հոգի Ստալինյան նավթահանքում և 140–150-ական հոգի Լենինյան ու Օրջոնիկիձեյի նավթահանքերում:

Այդ հանգամանքի պատճառով սիստեմատիկ կերպով յետ ենք մնում հին ռայոններում փակ շահա-

գործման հորերի համար անհրաժեշտ ամբողջ սարքավորումը համալրելու հարցերում և չափազանց մեծ չափով այդ հետամնացությունը տեղի ունի նոր ռայոններում, վորտեղ վոչ միայն նորմալ շահագործման տարրական պայմաններն ապահովված չեն, այլ և հարվածային մոնտաժային բրիգադների պակասությունն առաջին դժվարություններ է պատճառում հորափորման ծավալման համար (ջրամատակարարում, մեքենական արհեստանոցներ, հրդեհաշեջ միջոցառումներ և այլն):

Անհրաժեշտ է լրջորեն վերաքննել նավթահանքերի աշխատանքի կազմակերպությունը և ձեռք զարկել ստեղծելու նոր հարվածային-մոնտաժային բրիգադներ, մանավանդ նոր ռայոններում, վորպեսզի ամենակարճ ժամանակում հաղթահարենք շահագործման ամբողջ ֆրոնտի տեխնիկական սպասարկման մեջ յեղած հետամնացությունը:

Արդյոք յեղե՞լ են վորևէ ոբյեկտիվ պատճառներ, վորով պիտի բացատրել մեր վատ աշխատանքը շահագործման ասպարեզում: Վոչ, ընկերներ, գործը վատ է բացառապես նրա համար, վոր ուշադրություն չեն դարձրել ամեն մի հորին, նրան, վորի մասին ժամանակին նախազգուշացնում եր Բագվի Կոմիտեն: Թերությունը նրանում եր, վոր ամենքը ուշադրությունը կենտրոնացրել եյին վճռական հորերի վրա և մոռացության եյին տալիս աշխատանքի ամբողջ ֆրոնտը:

Անշուշտ, վճռական հորերին պետք եր և պետք է մեծ ուշադրություն դարձնել, բայց այդ ամենևին չի նշանակում, վոր պետք է թուլացնել աշխատանքի ամբողջ ֆրոնտը: Մեզ մոտ տեղի յե ունեցել հենց այդպիսի թուլություն: Տեղերում այսպես կոչված «հացատու» հորերի փոքր քանակությունից դուրս չեյին նկատում սակավանավթ հորերի անտառը, վորոնք սակայն ընդհանուր առած նյութական մեծ արժեք են ներկայացնում:



Արդյոք վորևէ լավ փորձ յեղե՞լ է, վոր ցույց տար, թե շահագործման ասպարեզում, ցանկություն յեղած դեպքում՝ յեռանդուն աշխատանքով կարելի յեր լավ արդյունքների հասնել. յեղել է ընկերներ: Վերցրեք այն հարցը, թե այդ գործն ինչպես է դրված Որջոնիկիձեյի ռայոնի առաջին ցեխում:

Շատ ռայոններ կարող են այդ ցեխից սովորել: Որջոնիկիձեյի ռայոնի առաջին ցեխի փորձը ցույց է տալիս, թե ինչպես մի շարք կազմակերպչական ու տեխնիկական միջոցառումների հետևանքով՝ ձեռք են բերվել ամենալավ հետևանքները հին սակավանավթ հորերի նկատմամբ:

Յեթե մինչև տեխնիկական միջոցառումների արմատացումը ցեխը 1933 թվի հունվարի 15-ից սկսած տալիս եր 51 տոնն, ապա ոգոստոսի 9-ից սկսած այդ ցեխն արդեն 110 տոնն է տալիս, վոր վկայում է վոչ թե հորերի արտադրողականության անկումը, այլ ընդհակառակը՝ որական նավթահանության բարձրացումն ավելի քան յերկու անգամ:

1-ին ցեխում գործադրվող տեխնիկական միջոցառումները հետևյալներն են.

1. Ծորաքաշ նասոսներով շահագործվող առատադապ հորերի համար մեծացված է մուտքի յերկարությունը:

2. Նասոսի տրամագիծը փոքրացվել է, նպատակ ունենալով բարձրացնել նասոսների լցման գործակիցը:

3. Մեծ քանակությամբ ջուր պարունակող հորերում նասոսների բեռնվածության ավելացումը:

4. Նասոսային հորերի համար «տելեսկոպ» նասոսներ գործադրելը:

5. Ջրով լցված հորերում հեղուկի մեծ չափով վեր մղելը և տեխնիկական այլ միջոցառումներ, վորոնք կապված լինելով քիչ ծախսերի հետ, առաջին եֆեկտ են տալիս:

Եթե հետագայում, ինչպես այդ անում է Որջոնիկիձեյի ռայոնի 1-ին ցեխը, ուժեղացվեն տեխնիկական ու կազմակերպչական միջոցառումները, ապա նավթահանությունն այժմյան մեր ունեցածի համեմատությամբ էլ ավելի կարող է ավելանալ:

Ինչո՞ւմն է այդ հաջող աշխատանքի գաղտնիքը: Նրանումն է, վոր ընկերները կոնկրետ կերպով զբաղվել են ամեն մի հորով, հաշվի յեն առել այդ հորի առանձնահատկությունները և միաժամանակ նրանց միտքն այն ուղղությամբ է աշխատել, թե ինչպիսի տեխնիկական միջոցներ ձեռք առնվեն, վոր քիչ չահավետ հորերի նավթահանությունը բարձրացվի: Գաղտնիքը նրանումն է, վոր ցանկանան զբաղվել վորոշակի հորով, ուսումնասիրեն նրան, աշխատեն նրա վրա, այլ չկարծեն, թե վորևէ «հացատու» հոր կարդարացնի անգործությունը, յերեսի վրա թողնելը և հանցավոր անուշադրությունը դեպի հազարավոր քիչ ու միջակ նավթ տվող հորերը:

Ուրիշներն ինչո՞ւ այդ փորձը չեն յուրացնում, ի՞նչ է անում մեր ագիտացիայի ապարատը: Ինչո՞ւ մամուլը սուր կերպով ձեռք չի առնում լավը և մյուսներին չի ստիպում այդ լավը գործադրել:

Ահա, յեթե Լենինյան ռայոնի ընկերները (նրանց մոտ էլ մի ցեխում քիչ չահավետ նավթահորերի աշխատանքի փորձ կա) բոլշևիկորեն ձեռք զարկեյին նավթահորերի նկատմամբ այդպիսի աշխատանքի, նրանք վաղուց արդեն նավթահանության խայտառակ հետ մնալը կհաղթահարեյին:

Այսպիսով դուք տեսնում եք, վոր նավթահանման հետ մնալու գործում օբյեկտիվ պատճառների մասին խոսք անգամ չի կարող լինել: Վատ աշխատանքը, լավ փորձը փոխադրելու անկարողությունը, քիչ չահավետ հորերի վրա յերկար կանգ առնելու ցանկության բացակայությունը—ահա թե վորտեղ է հետ մնալու պատճառներից մեկը: Յուրաքանչյուր նավթահորի նավթահանումը կես տոննով բարձրացրեք, և դուք մի օրում հազար տոննից ավելի նավթ կունենաք:



Կամ թե վերցրեք կոմպրեսորային անտեսության հարցը: Այդ հարցը լավ է մշակել կուսակցության Ստալինյան ռայկոմը: Ճշմարիտ ասած՝ այդ ռայկոմը նավթահանքում առաջավոր տեխնիկան արմատացնելու համար յեղած պայքարում ավանգարդումն է ընթանում, այդ գործի համար նա վոչ թե բարձրագոչ հայտարարություններով է պայքարում, այլ կոնկրետ կերպով:

Իլյիչի Բուխտայում՝

ա) ողարաշխիչ տնակների կոմպրեսորային կայանից սկսած մինչև նավթահորերն ողարաշխիչ ցանցի պարզ-վերասարքավորման հետևանքով (զոդած գծերի կիրառման տեղափոխում, օդի դուրս հոսելու վերացում և այլն).

բ) յուրաքանչյուր առանձին ողարաշխիչ տնակի համար համապատասխան քանակով օդի օպերատիվ փորձնական չարժման մի տոնն նավթի համար օդի ծախսման կողիտ մոտավոր հաշիվ անելու հետևանքով—համեմատաբար կարճ ժամանակամիջոցում կոմպրեսորային նավթահորերում նավթահանումն օրական 1000 տոննով ավելացնելուն են հասել: Դրան հասել են նաև շնորհիվ նրան, վոր կոմպրեսորային նավթահորերի ֆոնդը՝ կոմպրեսորային կայանի միևնույն հզորության պայմաններում զգալիորեն աճել է:

Շահագործման գծով այդ արդյունքներն ստացվել են տեխնիկապես համեմատաբար բավարար սարքավորված և նավթահորերի ռեժիմի վրա դիտողություն կատարելու համար տարրական տվյալներ ստանալու հնարավորություն ապահովող տեղամասերում (նավթի, ժամանակի կերպով հիմնական գծերով՝ օդի չափումը և այլն), մի բան, վոր դեռևս չի կարելի ասել Ազնեֆթի մի շարք հողամասերում:

Ներկայումս հանքերում դրությունն այնպես է, որ մենք հնարավորություն ունենք նավթը չափելու ըստ նավթահորերի առանձին-առանձին—Ստալինյան ռայոնում միջին հաշվով 60 տոկոս, Օրջոնիկիձեյի ռայոնում—70 տոկոս, և համարյա նույնքան էլ Լենինյան նավթահանքում: Նոր ռայոններում այդ էլ չկա և նավթահորերի ռեժիմի մասին դատում են «աչքի չափով»:

Մյուս չափող գործիքները՝ ինչպես օրինակ՝ նավթաչափերը, գազային հաշվեցույցները և այլն, նավթային արդյունաբերության կողմից դեռևս չեն յուրացված և դրանց պատրաստելու համար մինչև հիմա դեռևս մեքենայական բազա չի հայտնաբերված:

Ինչո՞ւ Բուխտայի փորձը մյուս նավթահանքերի կողմից հաշվի չի առնվում:

Ինչո՞ւ Ազնեֆթը չպետք է զբաղվի այդ պրոբլեմով ամբողջությամբ առած: Չէ՞ որ դա աննշան ծախսերի դիմաց տասնյակ հազարավոր տոնն նավթ կտա: Բանն ինչո՞ւմն է:

Անշարժություն, չտեսնված անշարժություն կա Ազնեֆթի տնտեսության մեջ տեխնիկան արմատացնելու հարցերում:

Ես չեմ խոսի հուլիսին մեր վատ աշխատանքի մյուս պատճառների մասին: Անդրերկրկոմի և Բաքվի Կոմիտեյի որոշումների մեջ այդ մասին մանրամասնորեն ասված է: Մենք այսօր հաստատուն կերպով պետք է ասենք:

Բաքվի կազմակերպությունը թույլ չպիտի տա հուլիսի կրկնությունը:

Օգոստոսին մեր գործերն ավելի լավ են ընթացել: Պետական պլանին (օրական 44 հազար տոնն) մենք ավելացրել ենք մինչև 46400 տոնն, որպեսզի հուլիսին պակաս ստացածը ծածկենք: Մենք համարյա մոտենում ենք պլանին. խայտառակ դրության մեջ է Օրջոնիկիձեյի ռայոնից նավթը մղելու գործը: Նավթը մղելու գործը կանոնավոր կազմակերպելու դեպքում մենք արդեն պլանին մոտեցած կլինեյինք, որովհետև մեզ մոտ ամբարներում շատ նավթ է կուտակվել:



Պլանը կատարելու և գերակատարելու համար մեզ մոտ բոլոր պայմանները կան:

## ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼ ՀՈՒԼԻՍԻ ԴԱՍԵՐԸ

Բացառապես մեզնից է կախված, թե որքան իր ժամանակին կկարողանանք մեր աշխատանքը վերակառուցել: Ի հարկե, որոշ տեղաշարժեր կան և հորափորության մեջ: Լուրջ ավարիաները քչացել են, ավարիայի ենթակա հորերը գործադրության մեջ մտցնելը ավելի լավացել է: Լենինյան ռայոնի ընկերներին պետք է ասենք—Բաքկոմի պլենումներից մեկում մենք ձեզ «ներում» ենք տվել, ասել ենք, թե ձեզ ընդառաջ ենք գնում, ձեզ լարված պլաններ չենք տա: Ձեզ մոտ բոլոր պայմանները կան, դուք հրաշալի հին կադրեր ունեք: Գործը բարձրացրեք—մենք նախազգուշացրել ենք ռայկոմին, որ յեթե կարճ ժամանակամիջոցում, «շունչ քաշելու» ժամանակամիջոցում գործերը տեղից չշարժեք, ռայկոմն իր կոչումը չի արդարացնի:

Բայց, ընկերներ, բոլոր ժամկետներն արդեն անցել են: Լենինյան ռայոնի ընկերներ, բոլոր ժամկետներն արդեն անցել են և մենք այսօր ակտիվի հետ միասին Բաքկոմի պլենումում պիտի ասենք, որ «շունչ քաշելու» ժամկետը ձեզ համար վերջացած է: Բարի յեղեք պլանը կատարել: Կենտկոմն ու Բաքկոմը միջոցներ են ձեռք առել ռայոնական ղեկավարությունն ամրապնդելու համար: Բաքկոմը ռայկոմի քարտուղար է հաստատել ընդունակ, աճող աշխատողներից — ընկ. Ախունդ Ջադեյին, որը պետք է ռայոնի աշխատանքը բարձրացնի: Լենինյան ռայոնի համար բոլոր ժամկետներն անցել են: Բարեհաճեցեք պլանը կատարել, բարեհաճեցեք աշխատանքն այնպես

վերակառուցել, որ Լենինյան ռայոնը հաղթահարի ամոթալի հետ մնալը:

Ստալինյան ռայոնի բոլշևիկներին պետք է ասենք, որ հենց նրանք պետք է առանձնապես մանրազննեն կրեպով հաշվի առնեն հուլիսի դասերը, որովհետև յեթե նրանք գործը վճռականորեն և արմատապես չուղղեն, Ստալինյան ռայոնում հուլիսը կարող է կրկնվել: Պետք է ռայոնի հետ մնալու պատճառները խնամքով ուսումնասիրել և ավելի վճռականորեն այդ պատճառները հաղթահարել:

Օրջոնիկիձեյի ռայոնի բոլշևիկներին պետք է ասենք, որ նրանք հաջողություններից գլխապտույտ չունենան Կրմաքիի նավթի շերտերի վրա տարած հաղթանակի կապակցությամբ, որովհետև բավական է որ գլխապտույտ ունենաք, ձեր աշխատանքում կարող է մեծ ընդհատումներ լինել:

Կագանովիչի անվան նավթահանքի բոլշևիկներին պիտի ասենք, որ նրանք ներկայումս բոլոր պայմաններն ունեն աշխատանքն զգալի չափով ծավալելու համար և որ այնտեղ հարկավոր է միայն աշխատանքի ավելի մարտական և բարձր տեմպեր վերցնել:

Ինչ վերաբերվում է Արտեմի կղզուն, նա մեզ մոտ մեծ ճանապարհից մի կողմ է ընկած: Մեր հանցանքը նրանումն է, որ մենք—Կենտրոնական և Բաքվի Կոմիտեներս քիչ ուշադրություն ենք դարձնում այդ կղզուն: Մենք պետք է այդ կղզու համար այնպես հոգ տանենք, որ նրանք մեր ղեկավարությունն զգան այնպես, ինչպես այդ զգում են մյուս ռայոնները: Այլապես այնտեղ, նրանց մոտ յերկու տասնյակ փորված նավթահորեր կան և չգիտենք, թե ինչո՞ւ այդ հորերը նավթ չեն տալիս:

Իսկ այնտեղ ամեն ինչ հանգիստ է, թեև նավթը չի գալիս: Կարծես թե դա օրինաչափ է: Հարցնում ենք յերկրաբաններին, — ինչո՞ւ չի գալիս նավթը. պատասխանում են, թե նավթ կա, չենք կարողանում վերցնել: Հարցնում ենք նրան, ով շահագործում է. — ինչու նավթը չեք վերցնում. պատասխա-



նում է. աշխատում ենք, իսկ նավթը չի գալիս: Պետք է լրջորեն ձեռք զարկել Արտեմի կղզուն, որը մեծ հեռանկարներ ունի ու քանի որ այնտեղ սպասվում է աշխատանքի մեծ ծավալում՝ հորափորման ու նավթահանման նկատմամբ մեծացրած առաջադրությունների կապակցությամբ: Այս տեղամասին պետք է բացառիկ ուշադրություն դարձնել:

Յես կանգնեմ այն հարցին, թե յերկրորդ կիսամյակում ինչ խնդիր է կանգնած մեր առաջ, ինչ խնդիր է կանգնած Բաքվի կազմակերպության, Բաքվի նավթագործների առաջ: Մենք ընկ. Օրջոնիկիձեյից մի նամակ ենք ստացել, հասցեյագրված ընկ. Բարինովին, ինձ և ընկ. Բերիային: Այնտեղ ընկ. Սերգոն գրում է յերկրի կողմից նավթամթերքների վերաբերմամբ աճած պահանջի և այն խնդիրների մասին, որ կանգնած են Բաքվի կազմակերպության և Ազնեֆթի առաջ: Դուք կարդացել եք Ծանր Արդյունաբերության Ժողկոմի հրամանը: Այդ հրամանում իր արտացոլումն է գտել այն, ինչի մասին ընկ. Սերգոն եր գրել մեզ ուղղած նամակում:

Նամակի վերջում ընկ. Սերգոն գրում է.

«Ձեր ուշադրությանն եմ հրավիրում այն բանի վրա, որ այդ խնդիրը, — մինչև 1933 թվի նավագնացության վերջը նավթային վառելիքի ռեսուրսները ավելացնելու և 1934 թվին Ազնեֆթի նավթի քանակությունը 20 միլիոն տոննի հասցնելու խնդիրը ժողովրդական տնտեսական արմատական խնդիրներից մեկն է հանդիսանում. հույս ունենք, որ դուք այդ խնդիրը կլուծեք բոլշևիկներին հատուկ հաստատակամությամբ ու յեռանդով, այդ խնդրի շուրջը համախմբելով կուսկազմակերպությունները, բանվորներին ու ինժեներա-տեխնիկական աշխատողներին և հույս ենք դնում Ադրկոմկուսի (բ) Կենտկոմին ու Բագկոմին Անդրյերկրկոմի յեռանդուն ոգնության վրա»:

Այսպիսով, ընկերներ, մեր առաջ դրվում է հետևյալ խնդիրը — ոչ միայն տարեկան պլանը կա-

1008
38598
ՊԵՏ. ՀԱՆՐԱՊ. ԳՐԱԴ.
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

տարել, այլ և, բացի դրանից՝ մենք պետք է կատարենք մեծացրած առաջադրությունը, վոր մեզ տվել են 3-րդ քառամսյակում, ըստ վորի օրական միջին թվով պետք է տրվի 44,000 տոնն նավթ: Սա մոտավորապես ավելի յե 380 հազարով: Բացի դրանից, մենք պետք է յերկրին մինչև նավագնացության վերջը տանք 500 հազար տոնն նավթ և այդպիսով, յերկրորդ կիսամյակում պետք է տանք վոչ թե 7,803,629 տոնն, մի թիվ վոր յելնում է տարեկան պլանից, այլ պետք է տանք 8,688,435 տոնն: Ահա մարտական խնդիրը:

Յեվ հետո, յերկրորդ կիսամյակում աշխատանքն այնպես կազմակերպել, վոր 1934 թվին վոչ պակաս քան 20 միլիոն տոնն նավթ տանք: Մինչև նավագնացության վերջը, այսինքն՝ մոտավորապես մինչև նոյեմբերի 15-ը մենք պետք է տանք 6.518.000 տոնն նավթ, և քանի վոր նավագնացության վերջին ամիսները օգոստոս ու սեպտեմբեր ամիսներն են, մենք պետք է յեռանդուն կերպով, բոլշևիկորեն աշխատենք և պայքարենք նրա համար, վոր այդ կարևորագույն հրահանգն ինչ կերպ էլ լինի՝ կյանքի մեջ մտցնենք:

Այդ խնդիրը կատարելու համար՝ մենք պետք է յերկրորդ կիսամյակում միջին թվով օրեկան 48,935 տոնն նավթ տանք:

Ըստ ամիսների - օգոստոսին — 46,425 տոնն, սեպտեմբերին — 50.500 տոնն, հոկտեմբերին—52 հազար տոնն, նոյեմբերին — 50,100 տոնն, դեկտեմբերին — 48,935 տոնն:

Այսօր Բաքվի Կոմիտեյի պլենումն ու Բաքվի ակտիվը պետք է լուծում տա կազմակերպության. — Ամենամոտ ժամանակներում միջին օրական նավթահանությունը հասցնել 50 հազար տոննի այն ձևով, վոր հետագա ամիսներին աճումն ընթանա այնպիսի տեմպերով, վոր մենք Բաքվի կազմակերպության համար անվիճելի կերպով կիրառելի մարտական խնդիրը կատարենք:



## ՏՆՏԵՍԱԲԱՐ ԾԱԽՍԵԼ ՆԱՎԹԸ ԱԶՆԵՎԹԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

500 հազար տոննի հաշվին, վոր մինչև նավագնացության վերջը պետք է տանք, պետք է տնտեսել հենց Ազնեվթի տնտեսության մեջ 100 հազար տոնն: Այս շատ կարևոր խնդիր է, ընկերներ. Ազնեվթի մեր տնտեսության մեջ նավթն սպառվում է անհոգ կերպով, տեղի ունեն մեծ կորուստներ: Այդ վերաբերում է մանավանդ մեր նավթաթոր գործարաններին, մասամբ և նավթահանքերին: Դուք չեք մոռացել, թե Բաքվի Կոմիտեն, հետո էլ կուսակցության Անդրյերկրկոմը սուր կերպով հարց դրին Շահումյանի ռայկոմի բոլշևիկների առաջ, վոր նրանք կռիվ մղեն այդ բանի համար: Յեվ ահա այժմ կոնկրետ խնդիր է դրվում, վոր մինչև նավագնացության վերջը և Պյատակովի գործարանը և Ստալինի գործարանը, Ջափարիձեյի, Բուդյոննու և Սորուսայի և այլ գործարանները նավթ խնայեն: Յես մանրամասն կերպով թվեր չեմ մեջ բերի այն մասին, թե ինչքան էր պետք և ինչքան են ծախսել, գործարաններում ինչ քանակությամբ կորուստներ են յեղել, վորովհետև այդ թվերը շատ անհաճելի յեն գործարանների համար, դիրեկտորների համար և կուսակցական կազմակերպությունների համար: Առաջին կիսամյակին Շահումյանի ռայոնի գործարանները ավել են ծախսել ու կորցրել են 127,421 տոնն նավթ: Յերկրորդ կիսամյակին մինչև նավագնացության վերջը Պյատակովի գործարանը պետք է տնտեսի 15,300 տոնն նավթ, Ստալինի անվան գործարանը — 42,000 տոնն, Բուդյոննու անվան գործարանը — 2.450 տոնն, Ջափարիձեյի անվան գործարանը հազար տոնն: Սուրուսայի գործարանը — 3.350 տոնն և Տ.Տ.Կ. — 23,000 տոնն: Խնդիրը նրանումն է, վոր տնտեսենք, վոր ռացիոնալ ու խելացի կերպով սպառենք նավթը, փոխարինենք նրան, հնարավոր դեպքում գազով և յերկրին տանք լրացուցիչ 100 հազար

տոնն նավթ: Այս մարտական խնդիր է, որ մենք ձեզ հետ միասին անպայման պետք է կատարենք: Այս մարտական խնդիր է Շահումյանի ռայոնի բոլշևիկների համար:

Մեր առաջ մեծ խնդիր է դրվում՝ ապահովել հորափորման այնպիսի ծավալումը, որ ինչպես ձեզ արդեն ասացի, ապահովված լինի 1934 թվին 20 միլիոն տոննից ոչ պակաս նավթահանումը: Դա, ընկերներ, նշանակում է ոչ միայն մենք պետք է անվիճելի կերպով և առանց առարկության կատարենք հորափորման տարեկան պլանը, մենք այժմ էլ ամոթալի կերպով յետ ենք մնում, բայց պետք է, որ տարեկան պլանից դուրս մենք էլի փորենք 300 նավթահոր: Այս մի հսկայական խնդիր է, որ մեր առաջ է դրվում, խնդիր որ անվիճելի կերպով կիրառելի յե: Դուք Ծանր Արդյունաբ. ժողկոմի հրամանում կարդացել եք, թե այդ բանն ինչպես է ապահովվում, մեզ ամեն ինչ տալիս են, որ մենք այդ խնդիրը լուծենք: Ես չեմ բացատրի Ծանր Արդյունաբերության Ժողկոմի հրամանը. այնտեղ միանգամայն հստակ ու պարզ կերպով է դրվում այդ պետական մեծ, յես կասեյի Բաքվի բոլշևիկների համար պատվավոր խնդիրը: Միանգամայն ակնհայտ է, որ այդ ոչ միայն Բաքվի կազմակերպության խնդիրն է, այդ Անդրկովկասյան բոլոր բոլշևիկների, Անդրկովկասյան ամբողջ կազմակերպության խնդիրն է:

Այդ գործի համար մղվող պայքարում միասնյա կամքով, միասնյա ձգտումով, թե ամբողջ Անդրկովկասյան կազմակերպությունը և թե առաջին հերթին Բաքվի կազմակերպությունը այս մարտական առաջադրությունը պետք է պատվով իրագործի:

Բաքվի բոլշևիկները, Բաքվի պրոլետարները մի անգամ չէ, որ կարողացել են նավթի համար մղվող պայքարում հերոսական աշխատանքի բարձր օրինակներ ցույց տալ: Բաքվի պրոլետարիատը մեր յերկրում լավագույն ջոկատներից մեկն է:



Բաքվի կազմակերպությունն ինչ կերպ էլ լինի, պետք է անհապաղ առանց մի ժամ կորցնելու անցնի այդ գործին և ծրագիրը կատարի:

Ի՞նչ է հարկավոր մեզ այսօր անել, որպեսզի այդ մեծ խնդիրն իրականացնենք: Ես կանգ չեմ առնի այն բոլոր հարցերի վրա, չեմ խոսի այն մասին, ինչի մասին արդեն շատ անգամ խոսված է:

## ԲԱՐՁՐ ՏԵՄՊԵՐԻ ՀԱՄԱՐ, ԸՆԴԴԵՄ ՀԱՆԳՍՏԱՑՈՒՑԻՉ ԱՆՀՈԳՈՒԹՅԱՆ

Մեր տեսողության սահմաններում պետք է չորս ղեկավար դոկումենտ լինի: Դա Համկոմկուսի (բ) Կենտկոմի որոշումն է Դոնբասի մասին, Համկոմկուսի (բ) Կենտկոմի որոշումն է յերկաթուղային տրանսպորտի մասին, կուսակցության Անդրյերկրկոմի որոշումն է նավթի մասին, ընկ. Օրջոնիկիձեյի նամակն է և Ծանր Արդյունաբերության Ժողկոմատի հրամանը:

Ահա այդ դոկումենտների, Բաքվի բոլշևիկների համար այդ գործողության ռեալ, կոնկրետ ծրագրի շուրջն է, որ անհրաժեշտ է հերոսական աշխատանք ծավալել, փշրել ու ջախջախել այն սառնաժն ու դիմադրությունը, որ կարող է տեղի ունենալ այդ գործի համար մղվող պայքարում:

Ես չեմ կասկածում, որ կգտնվեն և այնպիսի մարդիկ, որոնք յեթե ոչ բարձրաձայն, ապա փսփսալով կխոսեն պլանի անիրագործելիության մասին: Այդպիսի օպորտունիզմ կարող է տեղ առ - տեղ տեղի ունենալ: Դուք հիշում եք, թե Բաքվի կազմակերպությունն ու Բաքվի Կոմիտեն իր ժամանակին ինչպիսի ուժով հարված հասցրեց այդպիսի տենդենցներին ու տրամադրություններին: Դա յեղել է Ստալինյան ռայոնում, որտեղ օպորտունիզմի գլուխ եր անցել կուսակցության ռայկոմի քարտուղարը, որը հեռացվեց, իսկ հետո հանվեց Համկոմկուսի (բ) շարքերից: Բաքվի կազմակերպությունը պետք է վճռական հարված հասցնի պլանի անիրագործելի լինելու մասին յեղած

ոպորտունիստական դատարկաբանության բոլոր փորձերին: Պլանը ռեալ է և անպայման իրագործելի:

Այսօր այստեղ ներկա յե Համկոմկուսի (բ) Անդրյերկրկոմի ամբողջ քարտուղարությունը: Իհարկե պատահական չե, վոր մենք այսօր Բաքվի բոլշևիկների, մեր շարքերում տեսնում մենք Անդրյերկրկոմի ղեկավարությունը: Անդրյերկրկոմի քարտուղարությունը, Կենտկոմն ու Բաքկոմը ուշադրությամբ խորհել են յուրաքանչյուր մանրուքի համար և մենք հաստատում ենք, վոր այդ ծրագիրը կարելի յե կատարել և գերակատարել: Խնդիրը միայն նրանումն է, վոր մենք ձեզ հետ միասին բոլշևիկորեն աշխատենք, և լավ աշխատենք: Պետք է իհարկե կռվել և նրանց դեմ, վորոնք համակված են այնպիսի անհոգ տրամադրությամբ՝ «Шапками закидаем»: Դա սխալ է: Աշխատանքը լուրջ և դժվարին աշխատանք է: Հանգստացման, անհոգության վոչ մի տարր չպետք է լինի: Դժվարություններ կլինեն, պետք է կարողանալ դրանց հաղթահարել, կոնկրետ կերպով պայքարել նրանց դեմ:

Կենտրոնական հարցը իհարկե աշխատանքի տեմպերի հարցն է. դա մեր գործի հաջողությունն է վճռելու: Խոսքը վոչ միայն այն մասին է, վոր չի կարելի տասնորյակ կորցնել, խոսքը այն մասին է, վոր չի կարելի մի որ էլ կորցնել. և յեթե ուզում եք, չի կարելի և ժամեր կորցնել: Այդպես է դրված հարցը: Առաջին կիսամյակում մենք աշխատանքի վատ տեմպեր չենք ունեցել, սակայն ընկերներ, յերկրորդ կիսամյակում մեր առաջ դրված խնդիրների համապատասխան, աշխատանքի այդ տեմպերն ամենևին բավական չեն: Ոգոստոսի առաջին 10-որյակը—իսկ մեծ ծրագրի իրականացման այդ առաջին 10-որյակը ասում է, վոր մեզնում դեռ շատերը չեն հասկանում տեմպերի նշանակությունը, շատերը նույնիսկ մինչև իսկ, ղեկավար աշխատողները չեն հասկանում, վոր չի կարելի ժամեր կորցնել: Մեր աշխատանքի տեմպերը պարզապես անբավարար են, յեթե մենք շարունակենք այսպես առաջ գնալ, ապա գործը կտապալվի: Աշխատանքի բարձր տեմպերը—դա վազվզոց և իրարանցում չի, ժամերով մի «հացատու» հորի շուրջը նստել չի, վորն անում են յերբեմն մի ամբողջ շարք պատասխանատու մարդիկ: Աշխատանքի տեմպերը ղեկավարության այնպիսի կազմակերպություն տեղերում աշխատանքի այնպիսի կազմակերպում են պահանջում, վորոնք յուրաքանչյուր որ յեվ յուրաքանչյուր ժամ եֆեկտ կտան պլանի համար մղված պայքարում: Պետք է պայքար մղել ղեկավարության գրասենյակային բյուրոկրատական մեթոդի դեմ, այն ինչ վոր դրված է Դոնբասի և յերկաթուղային տրանսպորտի մասին Կենտկոմի կայացրած վորոշման մեջ: Մենք դա Ադնեֆթի վերաբերմամբ կիրառելով՝ պետք է յուրացնենք և բոլշևիկորեն կենսագործենք: Սակայն ընկերներ, շատերն այնպես են հասկանում, վոր յեթե ղեկավարության մեթոդը գրասենյակային բյուրոկրատական չըպիտի լինի, ապա նշանակում է, ամբողջ որը մի հորից դեպի մյուսը վազել, կամ նստել ժամերով «հացատու» հորի կողքին:—Մենք գրասենյակում չենք, այլ հորի մոտ: Դա սխալ է, դա նույնպես բյուրոկրատական իրարանցումի մեթոդ է, ժամանակի անարտադրողական վատնման մեթոդ: Խնդիրը նրանում է, վոր կարողանանք ուղիղ դասավորել և կուսակցական-տնտեսական ուժերը, մարդկանցից բանական աշխատանք պահանջել, վոր իրարանցում չլինի, վազվըդումներ չլինեն, ամեն մեկը իմանա, թե ինչ բանի համար է պատասխանատու, վոր տուգումն այնպես դրվի, վոր մենք, կրկնում եմ չկորցնենք և վոչ մի ժամ, արտադրողական աշխատանքի և վոչ մի որ: Այնպես կազմակերպել աշխատանքը, վոր նա պլանի իրականացումն ապահովի: Պետք է Ստալինի լավ և որինակելի աշակերտը լինել: Նրա աշխատություններում քիչ չեն գրված, թե նոր պայմաններում ինչպես պետք է նոր ձևով ղեկավարել:

Համկոմկուսի (բ) Կենտկոմի մի շարք վորոշումներում պարզ տված է, թե բոլշևիկներն այստեղ ինչպես պետք է աշխատեն։

Ի՞նչ է պահանջվում Ադնեֆթի կենտրոնական ապարատից։ Իմ կարծիքով պահանջվում է ղեկավարել կարողանալ տնտեսական քաղաքականության ավելի մեծ մասշտաբով։ Կարողանալ տնտեսության մի ճյուղը մյուսի հետ կապել, կարողանալ նախատեսել, խորապես թափանցել կոնկրետ հարցերի մեջ, վորպես զի հսկայական տնտեսության մեջ ընդհատումներ, պատահականություններ, անսպասելիություններ չլինեն։

Մենք այստեղ խոսում ենք այն մասին, թե հորափորման ասպարեզում հետ ենք մնում—դա ճիշտ է։ Բայց մենք արդեն այստեղ իսկ խզում ունենք հորափորման և շահագործման միջև։ Մենք քիչ քանակությամբ նավթահորեր չունենք, վոր հորափորումից ենք ստացել, բայց գործադրության մեջ չենք դրել, շատ տարբեր պատճառներով։ Կամ արմատուրա չկա, կամ խողովակներ չեն բերել, այնտեղ բանվորական ուժը չի բավականանում և այլն և այլն։

Մի՞թե հորափորման հետ մնալով հանդերձ՝ թույլատրելի յե այդ խզվածությունը։ Դա ի՞նչ է նշանակում։ Դա նշանակում է, վոր չեն կարողանում տնտեսության մի ճյուղը մյուսի հետ կապել։ Չեն կարողանում գործն այնպես կազմակերպել, վոր մենք այնպիսի նավթահորեր չունենանք, վորոնք կանգնեցին, իսկ այդպիսիների թիվը, վոչ թե տասնյակների, այլ հարյուրների յե հասնում։ Մենք Օրջոնիկիձեյի ռայոնում Կիրմակի նավթի շերտն ենք նվաճել։ Հենց, վոր մեծ քանակությամբ նավթ գտանք, մենք հանդիպեցինք խայտառակության նավթ մղելու փորձում։ Նավթամղումը չի կապվում նավթահանման հետ։ Յեվ ահա այստեղ վազվզում են, վիճում, մեղքը միմիանց վրա գցում, իսկ դրանից մեր գործը չի թեթևանում։



Առհասարակ նավթամղման պրոբլեմը, այն ժամանակ յերբ նավթահանման տեմպերն աճում են, բոլորովին լուծված չէ։ Վերցրեք նասոսների հարցը։ Մենք բոշաների պես քոչում ենք հանքից հանք, միշտ միևնույն նասոսներն ունենալով։ Այստեղ նասոսներ ենք ուղարկել Օրջոնիկիձեյի ռայոնը։ Իսկ յեթե Լոկբատանը չստանի, ապա դա մեզ ճգնաժամային դրության մեջ կդնի։ Պետք է կարողանալ ավելի լավ կռվել մեր տնտեսության համար, տեսնել այն, ինչ վոր տարրականորեն անհրաժեշտ է։ Չի կարելի բոշայի պես աշխատել մի այնպիսի հսկայական վճռական տնտեսության մեջ, ինչպիսին Ադնեֆթն է։

Այսպես ուրեմն ընկերներ, շատ հարցերի և ամենից առաջ հորափորման մեջ, շահագործման մեջ տեխնիկան յուրացնելու հարցերի վերաբերմամբ շատ բան կարելի յե անել առանց մեծ ծախսերի։ Պետք է ավելի լավ ղեկավարել տնտեսությունը։ Պետք է, վոր Ադնեֆթի հանքային վարչությունը շուտով նավթային տնտեսության ղեկավարության իսկական տեխնիկական շտաբ դառնա։

Յես էլ չեմ խոսում ապարատի այնպիսի ողակի մասին, ինչպիսին է տեխսնաբը, վորտեղ գոյություն ունի աշխատանքի տիպիկ գրասենյակային-բյուրոկրատական մեթոդ։ Պետք է մտնել և այդ տնտեսությունը և տեսնել թե ինչ է կատարվում այնտեղ և կոնկրետ կերպով ուղղել։ Այս բոլորը վորոշ հարաբերությամբ վերաբերում է բոլոր հանքերին, նույն իրարանցումն ու դես ու դեն ընկնելը հատուկ է և կուսակցական աշխատակիցներին։

## ՆԱՎԹԱՀՈՐԵՐԸ ՊԵՏՔ Է ԱՇԽԱՏԵՆ ԺԱՄԱՑՈՒՅՑԻ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՆՄԱՆ

Յես գտնում եմ, վոր մեր հանքերի ղեկավարներն այդ մեծ խնդիրը լուծելով, պետք է ցույց տան ներքին միջոցների մոբիլիզացիայի յենթարկել կարողանա

յու–օրինակներ, գործն այնպես կազմակերպելու օրինակներ, վոր փոքր վարպետը լինի փոքր վարպետների հատուկ բոլոր իրավունքներով, վորպեսզի փորող խումբը լինի հորատող խումբ, վորպեսզի չլինի սարսափելի հոսունություն, վորպեսզի գործի ամբողջ կազմակերպումն այնպես լինի դրված, վոր նավթահորերն աշխատեն, ինչպես ժամացույցի մեխանիզմը:

Յեթե քննադատորեն մոտենանք մեր կուսակցական ցեխ հանքային կազմակերպությունների աշխատանքին, ապա շատ բան կարելի չէ անել, վորպեսզի իրականանան այն վորոշման բոլորովին պարզ ցեվ կոնկրետ կետերը, վորի մասին յես մի քանի անգամ ասացի՝ Անդրերկրկոմի վորոշումները: Կուսակցական կազմակերպությունները պետք է ապահովեն տեմպերը աշխատանքի մեջ: Վորովհետև վոչ մի տեմպ առանց պայքարի, ձեռք չի բերվում: Մեր կուսկոմիտեները, կուսկոլլեկտիվները և բջիջները պետք է աշխատեն, վորպեսզի դառնան աշխատանքի տեմպերի կազմակերպիչներ, վորպեսզի նրանք կարողանան կտրել բյուրոկրատական ամեն տեսակի կապանքներ, հաղթահարել դանդաղկոտությունը: Պետք է գործնականում բարձրացնել գրուպպայի դերը: Մենք ցեխերը վերացրինք: Գրուպպան պետք է դառնա առաջին ամուր տնտեսական օղակը: Պետք է բարձրացնել հորատող վարպետի դերը, ինչ է նշանակում գործնականում պայքարել—տեմպերի համար: Պետք է վերցնել Ծանր Արդյունաբերության Ժողկոմատի հրամանը և այն վորոշումը, վոր ընդունվել է Անդրերկրկոմի քարտուղարության, կուսակցության Կենտկոմի և Բաքվի Կոմիտեյի կողմից, այն դոկումենտը, վոր դուք պետք է այստեղ հաստատեք և պայքարեք նրա համար, պայքարեք վորոշման յուրաքանչյուր կետի համար, պայքարեք այդ վորոշման իրականացման համար բոլշևիկներին հատուկ յեռանդով: Այնտեղ ամեն ինչ նախատեսված է.— ով, ինչ պիտի անի,



յերբ, ինչ ժամկետում. վոր հանք ըվորքան պետք է փորի և յերբ հորը տա շահագործման, ինչպիսի հորեր պետք է բարձրացնել ավելի մեծ քանակությամբ նավթ տվող հորերի մակարդակին, քանի կանգնած հոր գործի դնել, քանի ստանոկներ փոխադրել, ով ինչի համար է պատասխանատու, ով է պատասխանատու վիշկաներ կառուցելու համար և այլն և այլն:

Ամեն ինչ ասված է և մանրամասն մշակված: Խնդիրը կայանում է նրանում, վոր Բաքվի կազմակերպության յուրաքանչյուր ակտիվիստ կարողանա ցույց տալ իր ավանգարդային դերը այդ դիրեկտիվների իրականացման համար մղվող պայքարում: Յեթե մենք բոլորս միասին — Բաքվի կազմակերպության հզոր կոլլեկտիվը, Բաքվի պրոլետարները, ինչպես կպչենք այդ գործին, մենք անկասկած կլուծենք այդ խնդիրը: Մենք բոլոր պայմաններն ունենք: Պայքար վորոշման յուրաքանչյուր կետի իրագործման համար, ժամկետների և աշխատանքի վորակի համար.— այս բոլորը մեզնից պահանջվում է և մենք ինչ ձևով էլ վոր լինի պետք է այդ անենք:

Յերկրորդ վճռական խնդիրը նոր նավթահանքերը յուրացնելն է. Լոկ-Բատանը, Կալան և Արտեմի կղզին: Մենք ունենք նույնպես և յուրացման կոնկրետ ծրագիր, այդ մասին յես արդեն մանրամասն ձեզ հետ չեմ խոսի: Դուք այդ կարդացել եք և ընկ. Օրջոնիկիձեյի հրամանում: Դա կարտացոլվի և այն դոկումենտում, վորը մենք այստեղ կնդունենք: Ի՞նչ է նշանակում յուրացնել այդ ռայոնները: Դա նշանակում է, կոնկրետ կերպով դնել մեքենայական արհեստանոցի կոմպրեսորային տնտեսության մյուս տեխնիկական կառուցումների հարցը: Խմելու ջուրը, առհասարակ ջրի պրոբլեմը բանվորների բնակարանի, կադրերի, ինժեներա–տեխնիկական անձնակազմի, կուսակցական և տնտեսական ուժերի ուղիղ դասավորման պրոբլեմը— այդ բոլոր նոր նավթահանքերը յու-

րացնելու կարևորագույն հարցեր են: Մենք ունենք այդ ծրագիրը և այդ ծրագրի համար պետք է պայքարենք:

## ՆՈՐ ՌԱՅՈՆՆԵՐԻՆ ԼԱՎ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպե՞ս ենք այդ ծրագիրն իրացնում ոգոստոսի առաջին տասնօրյակում: Յես այստեղ պետք է դնեմ հին նավթահանքերի դերի հարցը: Հին նավթահանքերը, վորտեղ կան և հին կադրեր և փորձ, և նյութական ռեսուրսներ և մարդկային ռեսուրսներ, ինչպիսին վոր կուզեք: Մինչև վոր հին հանքերը պետականորեն չմոտենան նոր հանքերի մոտեցման խնդրին՝ և վոչ թե յելնեն իրենց ռայոնական հանքի շահերից, նոր ռայոնների յուրացման պրոբլեմի լուծումը դժվար կլինի:

Յես ձեզ կպատմեմ, թե հին նավթահանքերը ինչպես են կատարել իրենց պարտավորությունները նորերի և ամենից առաջ Լոկ-Բատանի վերաբերմամբ մինչև ամսի 9-ը:

Լենինյան ռայոնը պետք է տար հորատման սարքավորման 10 լրիվ կոմպլեկտ գործիքներով և շարժիչներով:

Մինչև այժմ լրիվ ստացել են յերկու ստանոկ, վոչ լրիվ հինգ ստանոկ (չեն բերել ջրմուղները և այն մանրուքը, այսինքն, բանալիներ, ելեվատորներ, շղթայի բանալիներ, փոկեր, շղթաներ, կանատներ և այլն, առանց վորի հորատումը չի կարելի կատարել):

Կիրովի ռայոնը պետք է տար 10 լրիվ կոմպլեկտ, մինչև հիմա յերկու վոչ լրիվ ստանոկ է տվել:

Ստալինյան ռայոնը տվել է յերկու ստանոկ, նույնպես առանց մանրունքի:

Լենինյան ռայոնը յերեք մոնտաժային բրիգադի փոխարեն յերկու բրիգադ է տվել: Բուզովնու ան-



վան գործարանի դիրեկտոր ընկ. Սիրովատկինը (կուսակցության անդամ) Միկոյանի նավթահանքի դրությունը տեսնելով, ոգոստոսի 8-ին իր բանվորներից մի բրիգադա յե տվել:

Ստալինյան ռայոնը յերեք բրիգադի փոխարեն—յերկու բրիգադ է տվել:

Կիրովի ռայոնը վոչ մի բրիգադ չի տվել:

Մոլոտովի նավթահանքը մի բրիգադ է տվել:

6 դյույմանոց հորատորային խողովակ—վոչ մի նավթահանք մի մետր ել չի տվել:

Հորատոր բրիգադներ 14-ական հոգուց բաղկացած չեն տվել Լենինյան ու Ստալինյան ռայոնները:

Կիրովի ռայոնը մի հորատոր խմբակ է տվել 8 հոգուց բաղկացած, այսինքն կես բրիգադ:

Կիրովի ռայոնը տվել է նորոգում պահանջող անպետք սարքավորում:

Մի՞թե կարելի յե այսպես աշխատել: Ի՞նչպես պետք է խոսենք այն մասին, թե նշանակված ժամկետին պետք է կատարել պլանը, յերբ որերը հաշված են, իսկ մեզ մոտ գործին այսպես են մոտենում:

Յեվ Ազնեվթն այստեղ չպետք է գլխավոր համաձայնեցնողի դերում լինի: Ազնեվթը պետք է հանդես գա տնորենի դերում, նա կարող է պահանջել, վոր Ազնեվթի հրամանը կատարված լինի:

Կալայի ռայոնում բուրգերի շինարարության ժամկետները չեն պահպանվում: Նոր նավթհանքերումըն ել փոխանակ հիմա, կազմակերպված ձևով գործին մտնելու, աշխատանքը կանոնավոր կազմակերպելու, նույնպես ավելի շատ իրարանցում ու վազվզոց է: Ձեզ հետ միասին մեր խնդիրը կայանում է նրանում, վոր նոր ռայոններին ինչպես հարկն է ոգնենք, այլապես պլանը դժվար կլինի կատարել, վորովհետև այդ ռայոնները պետք է մեզ դեռ 33 թըվին բավական քանակությամբ նավթ տան: Այդ ռայոնները վճռող ռայոններ են լինելու 34 թվին, յերբ ավելի մեծ ծրագիր պետք է կատարենք:

Ասում են բանվորական ուժ չկա: Այստեղ տեղին է հիշեցնել այն, ինչ վոր իր ժամանակին այդ հարցի վերաբերյալ ասել է ընկ. Ստալինը:

«Հանգամանքներն արմատապես փոխվել են: Դրանից հետևում է, վոր այլևս չի կարելի հույսը դնել բանվորական ուժի ինքնահոսի վրա: Նշանակում է ինքնահոսի «քաղաքականությունից» պետք է անցնել արդյունաբերության համար կազմակերպված ձևով բանվորական ուժ հավաքագրելու քաղաքականության»: Այդ մասին մեզ մոտ մի քիչ մոռացել են:

Ներկայումս բոլորը հենվում են այն բանին, թե բանվորական ուժ չկա: Յերկաթուղագիծը նույնպես. իսկ յես գիտեմ այդպիսի դեպք. Բալաջարի յե յեկել մի բանվոր վարձվելու: Յերկաթուղային կանոնադրության ինչ վոր հոդվածի համաձայն, նա պետք է բժշկի մոտ քննության յենթարկվի: Դե, վոչինչ, կարելի յե մի որում մարդուն բժշկական քննության յենթարկել, իսկ հետևյալ որը աշխատանքի ընդունել: Սկզբում նրան ուղարկում են աչքի բժշկի մոտ, հետո մի ուրիշ բժշկի մոտ, այնուհետև յերրորդի մոտ: Հետո, ինչպես յերևում է, վորևէ կետում ասված է, թե պարտադիր կերպով պետք է մեզը քննության յենթարկել: Նրան Բալաջարուց ուղարկում են քաղաք այդ գործի համար: Մարդը ութ որ է կորցնում, նրա մար, վոր այդ բոլոր ձևականությունները անցնի, նրա համար վոր նա գնա զինվորական հաշվառքի մեջ մտնի, վորպեսզի այնուհետև նրան աշխատանքի ընդունեն: Յեվ դա կոչվում է Ստալինի դիրեկտիվի կատարումը բանվորական ուժը կազմակերպված ձևով հավաքագրելու մասին:

## ՎՈՉ ԹԵ ԴԵԿԼԱՐԱՑԻԱՆԵՐՈՎ, ԱՅԼ ԳՈՐԾՈՎ ՊԵՏՔ Է ՊԱՅՔԱՐԵԼ ՆԱՎԹԻ ՀԱՄԱՐ

Ազնեֆթին, իհարկե, բանվորական ուժ հարկավոր է տալ: Յես կասեմ, թե ինչ վորոշում են ընդունել այդ հարցի մասին Յերկրային Կոմիտեն, Կենտկոմը և Բաքկոմը: Սակայն, չե՞ վոր խնդիրը նրանում է կայանում, վոր կարողանանք ընդունել այդ բանվորներին, կարողանանք նրանց համար բնակարան և սնունդ կազմակերպել, վոր դեպի գործը բյուրոկրատական անհոգի վերաբերմունք չլինի:

Ասում են, բանվորներ չկան, իսկ Կալայում չեն կարողացել 14 բանվորների պահել: Սա խայտառակությո՞ւն չէ, արդյոք: Մի բան պարզ է, վոր Բաքվի կազմակերպությունը չի կարող բանվորական ուժի պակասության պատճառով տապալել աշխատանքը: Յեվ ակտիվի հետ միասին Բաքկոմի պլենումը պետք է ասի, վոր այն աշխատանքի համար, վորը մեզնից պահանջվում է, Ազնեֆթին բանվորներ պիտի տրվեն և այդ առջին հերթին պիտի կատարի կուսակցական կազմակերպությունը: Մենք վորոշել ենք, վոր պրոֆմիությունները, պրոֆմիությունների Ադրբեջանի խորհուրդը՝ հազար նավթագործ բանվոր տա: Ընկ. պրոֆաշխատողներ, վոչ թե դեկլարացիաներով, այլ կարողացեք գործով պայքարել նավթ համար: Մենք ձեզ ասում ենք — դուք ցանկանում եք նավթի համար կոնկրետ կերպով պայքարել, Ազնեֆթի համար ուրիշ ձեռնարկություններից ու հիմնարկություններից հազար բանվոր տվեք, ընդունակություն ունեցեք ուրիշ վայրերից վերցնել, ընդունակություն ունեցեք նրանց կազմակերպել, ընդունակություն ունեցեք տալ, այդ գործում որինակելի աշխատանք ցույց տվեք և մենք այն ժամանակ կասենք, վոր դուք կարողանում եք նավթի համար պայքարել:

Կոմյերիտմիությունը պետք է նավթի արդյունաբերությանը հազար կոմյերիտականներ տա. վերցնի նրանց զանազան վայրերից, ուրիշ արտադրություններից դուրս բերի՝ վոմանց դրասենյակներից: Հեղափոխական յերիտասարդության համար շատ օգտակար է հորատորություն, նավթահորի մոտ դաստիարակվելը: Կոմյերիտականներին մարտական առաջադրություն ենք տալիս — նավթի համար բարձրա-

դոչ հայտարարություններով միք պայքարի, այլ ընդունակություն ունեցեք նավթի համար պայքարել յերիտասարդության հատուկ հեղափոխական յեռանդով, վերցրեք ձեր ջոկատից հազար՝ հեղափոխական յերիտասարդ լավագույն մարդկանց, տվեք Ադնեֆթում աշխատելու:

500 հոգի կոմունիստներից փոխադրել նավթի ֆրոնտը ուրիշ տեղերից: Այդպիսի կոմունիստներ մեզ մոտ Բաքվում բազմաթիվ են. հարկավոր է նրանց խնդրել աշխատել նավթահորերում, դա նավթի համար մղած կոնկրետ պայքարը կլինի:

Ադրբեջանի կարմրադրոշ նավթային ինստիտուտի ուսանողություն (մեզ մոտ բազմաթիվ ուսանողներ են սովորում) պիտի 500 մարդ տա վեց ամսով:

Ուսանողների համար լավ պրակտիկա կլինի, յերբ նավթի համար մղված պայքարում Բաքվի կազմակերպության համար մարտական ժամանակամիջոցում նրանք լինեն նավթահորերում, բուրղերի մոտ:

Կան այնպիսի ուսանողներ, վորոնք կարծում են, թե կոչված են ուսանելու, իսկ նավթի համար պայքարելը—այդ արդեն իրենց գործը չէ: Այդպիսիներին մենք կասենք, ձեզ ուսում տանելուց ել կհեռացնենք, և կխնդրենք աշխատել Ադնեֆթի տնտեսությունում: Բարեհաճեցեք աշխատել, կուսակցությունն ու յերկիրը ձեզնից նավթ են պահանջում: Մասնակցություն ունեցեք այդ պատվավոր գործում: Յես առանձնապես չեմ կասկածում, վոր թե յերիտասարդությունը, թե ուսանողության հիմնական մասսան, թե մարդկանց ահագին կույրերին արձագանք կտան այդ կոչին և յեռանդուն կերպով կաշխատեն: Սակայն, մենք այստեղ, Բաքվի Կոմիտեյի — ակտիվի հետ ունեցած պլենումում, պետք է ասենք, վոր յեթե մի մոմենտում կուսակցությունն ու յերկիրը Բաքվի կազմակերպության առաջ մարտական խնդիր են դնում, ապա մեր շարքերում ֆրոնտը լքող



ներ գտնվեն, յեթե նրանց գրպանում կուսակցական տոմսակ կա, այդպիսիները տեղ չունեն կուսակցության շարքերում, իսկ յեթե նա ուսանող է—այդպիսին տեղ չունի բարձրագույն դպրոցում (ծափահարություններ):

Հետո, ընկերներ մի նկատողություն յերիտասարդ ինժեներների մասին: Վերջին ժամանակներս մենք այսպիսի փաստի յենք հանդիպում. յերիտասարդ ինժեներ է, նա հենց դեռ նոր է ավարտել համալսարանը, պետությունն ու բանվոր դասակարգը փող են ծախսել նրա վրա: Նրան ասում են՝ բարեհաճիր գնա նավթահորում աշխատելու. նա տարակուսած նայում է,—ինչպե՞ս, յես ինժեներ, պետք է գնամ հորում աշխատեմ, դուք ինձ ցեխ կամ գրբուպյա կառավարելու պաշտոն տվեք: Այդ տրամադրությունը պետք է անողոք կերպով մերկացնել: Մենք պետք է աշխատենք, վոր տեխնիկական ուժերն այնտեղ կենտրոնացվեն, վորտեղ վերջին հաշվով լուծվում է նավթի հարցը — նավթահորի մոտ:

Աշխատավարձի հարցեր: Այստեղ ձեզ պետք է ասեմ, վոր այդ բանը մեզնում շփոթված է: Շնորհակալություն տնտեսավարներին և մեծ շնորհակալություն մեր պրոֆմիութենականներին. — այնպես է շփոթված, վոր վոչինչ ջոկել չես կարող: Շփոթված է և Ադնեֆթի արհեստանոցներում, և հորափորման գործում, և մյուս տեղերում: Մարդիկ այնպես են խճճել, վոր նստել են և իրենք ել չեն կարողնում խճճածը բաց անել: Ընկ. Որջոնիկիձեյի հրամանում տրված է ղեկավար հրահանգը: Մեր խնդիրը կայանում է նրանում, վոր լրջորեն ձեռք խփենք այդ հարցին, կոնկրետ կերպով մոտենանք, ինչպես վոր Համկոմկուսի (բ) Կենտկոմն է արել Դոնբասի և յերկաթուղու վերաբերմամբ:

## ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՐԵՍՈՎ ԴԵՊԻ ՆԱՎԹԸ

Թույլ տվեք դրա առնչությամբ միայն մի քանի խոսք ասել մեր պրոֆմիությունների աշխատանքի մասին: Այդ մասին յես շատ մանրամասն խոսել եմ պրոֆ. աշխատողների Բաքվի համաքաղաքային ակտիվում: Յես խոսել եմ այն մասին, վոր յեթե վերցնենք այն խնդիրները, վորոնք կանգնած են Բաքվի կազմակերպության առաջ և թե դրանց համապատասխան ինչպես են վերակառուցված պրոֆկազմակերպությունները, ապա այդ վերակառուցումը շատ հետ է մնում: Վերցրեք Նավթագործների միության Ադրբեջանի կոմիտեն: Կուսակցության Յերկրկոմի վորոշումը, վորտեղ խիստ գնահատական է տրված Նավթագործների միության Ադրբեջանի կոմիտեյին, չի մշակված վոչ ստորին, վոչ էլ ղեկավար կազմակերպություններում: Հորափորումը նոր ռայոններում ծավալելու մասին ընկ. Որջոնիկիձեյի տված հրահանգը Նավթագործների միության կոմիտեյի նախագահությունը չի քննարկել: Յեթե վերցնենք սոցմրցության և հարվածայնության խնդիրները, ապա այդ գործերի մեծ մասը միության կողմից աչքաթող են արվում: Միությունները կոնկրետ կերպով չեն աշխատում: Ճիշտ է, հորից հոր են վազում, սակայն չեն կարողանում, թե արտադրական հարցերը և թե բանվորներին սպասարկելու կոնկրետ հարցերը դնել:

Յերբ յես յեղա Ստալինյան ռայոնում, բաց շատրվանող հորի մոտ, ինձ ապշեցրեց այն հանգամանքը, վոր մի այդպիսի դժվարին աշխատանքի ժամանակ նավթահանքում տարրական բժշկական ոգնություն չկար: Մենք հարցրինք, թե ինչու բժիշկ չկա. բանից դուրս է գալիս, գիտե՞ք ինչ, վոր պետք է բժիշկ կանչելու համար Բադառողջբաժնի թույլտվությունն ունենալ, իսկ վորովհետև Բադառողջբաժնի տեղը չեն գտել, բժշկական ոգնությունն էլ չկա:



Մենք այնպես արինք, վոր բժշկական ոգնությունն անմիջապես կազմակերպվեց: Իսկ վորտեղ էն յեղել պրոֆմիությունները: Ինչո՞ւ նրանք չեն նկատում այդպիսի տարրական բաները: Յես ընկերներ կարող էյի նավթագործների պրոֆմիության թույլ աշխատանքի շատ կոնկրետ որինակներ բերել, թե բանվորական մատակարարման լավագույն կազմակերպման համար մղվող պայքարի ասպարեզում և թե աշխավարձի գործը կարգավորելու հարցերում:

Որինակ Ստալինյան հանքի ռայոնական հանքկոմը արձագանք չի տվել հորափոր բանվորների աշխատավարձի նկատմամբ յեղած ուղղակի աղավաղումներին: Հորափոր բանվորներին առաջադրություն է տրվում, նրանք գերակատարում էն այդ առաջադրությունը, իսկ աշխատավարձը հաշվելիս գտնում են, վոր նրանք վոչ միայն պլանը չեն գերակատարել, այլ և թերակատարել են:

Այսպես որինակ. № 1119 հորում ոպերատիվ պլանով առաջադրությունը կատարված է 118 տոկոս, իսկ աշխատավարձը հաշվելիս դուրս է յեկել, վոր պլանի միայն 61,5 տոկոսով է կատարված:

№ 915 հորում առաջադրությունը կատարված է 162,2 տոկոսով, իսկ յերբ հաշվել էն, 74,4 տոկոս:

№ 108 հորում պլանը կատարված է 185 տոկոս, իսկ հաշվելիս դուրս է յեկել 38,7 տոկոս:

№ 1117 հորում՝ 250 տոկոսի տեղ, դուրս է յեկել միայն 95 տոկոս:

Այս որինակները կարելի յե բազմապատկել:

Ընկ. Ստալինը գրել է «Լենինիզմի հարցեր» գրքում.

«Պրոֆմիությունները կարելի յե անվանել մեզնում գերիշխող բանվոր դասակարգի գլխավոր կազմակերպություն: Նրանք կոմունիզմի դպրոցներ են հանդիսանում, նրանք իրենց շարքերից լավագույն մարդիկ են առաջ քաշում, կառավարելու բոլոր ճյուղերում, ղեկավար աշխատանք տանելու համար: Նրանք իրականացնում են կապը բանվոր դասակարգի

կազմում գտնվող առաջավորների և հետամնացների մեջ: Նրանք բանվորական մասսաները միացնում են բանվոր դասակարգի ավանգարդի հետ»:

Մի՞թե կարելի յե ասել, վոր մեր պրոֆմիությունները այդ խնդիրը լավ են կատարում, յեթե վերցնենք հարվածայնության, սոցիալիստական մրցության հարցը:

Քիչ են հոգում բանվորի մասին, բայց չեն մոռանում հոգալ իրենց մասին: Իմ առաջ մի հետաքրքիր դոկումենտ կա: Պրոֆմիությունների Ադրբեջանի խորհրդի նախագահության վորոշումը:

Մարդիկ պրեմիա տալու հարցն են վճռում: Ի՞նչ եք կարծում, լավագույն հարվածայիններին՞: Վոչ, մարդիկ նստում են նիստ գումարում և իրենք իրենց պրեմիա տալիս (ծիծաղ): Արժե այստեղ կարդալ այդ նիստի արձանագրությունը:

## ՔԱՂՎԱԾՔ

Պրոֆմիությունների Ադրբեջանի խորհրդի 1933 թվի ապրիլի 29-ի նիստի № 17 արձանագրությունից:

3. Այն աշխատողների պրեմիա տալու մասին, վորոնք աչքի յեն ընկել 1933 թվի կոլլեկտիվ պայմանագիր կնքելու կամպանիան տանելու ժամանակ: (ընկ. Կյուչկին):

Ադրբեջանի պրոֆմիությունների նախագահությունը վորոշում է. կոլլեկտիվ պայմանագրեր կնքելու կամպանիան ղեկավարելու և տանելու գործում բոլշևիկյան որինակներ ցույց տալու համար, յուրաքանչյուրին իր մեկ ամսվա ռոճիկի չափով պրեմիա տալ հետևյալ ընկերներին.

ա) ԿԻՐԴՅԱՆՈՎԻՆ — Նավթագործների կենտրոնական վարչություն,
բ) ՍԱՀԱԿՅԱՆԻՆ — Ցեմենտակղմինդրի կենտրոնական վարչություն,



գ) ՍՏԵՊԱՆՈՎԻՆ — Շոֆերների միություն,
դ) ԼՈԻՆԻՆԻՆ — Պրոֆմիությունների Ադրբեջանի խորհուրդ,
յե) ԼԻՖՇԻՑԻՆ — Պրոֆմիությունների Ադրբեջանի խորհուրդ:

Ինֆորմացիայի գործը դնելու աշխատանքում բարձր ակտիվություն ցույց տալու համար ընկ. Մորտիկովին մի ամսվա ռոճիկի չափով պրեմիա տալ, իսկ ընկ. Գոյլդին («Տրուդ» թերթ) — 150 ռուբլի:

Կոլլեկտիվ պայմանագրային կամպանիային վերաբերող նյութերը ժամանակին և մաքուր ձևակերպելու համար ընկ. Ստեփանովին (պրոֆմիությունների Ադրբեջանի խորհրդի աշխատավարձի բաժին)—150 ռուբլի:

Մատնանշել ընկ. Կլյաչկինի աշխատանքի լավ որինակները (Պրոֆմիությունների Ադրբեջանի խորհրդի աշխատավարձի և արտադրության բաժին):

Պրոֆմիությունների Ադրբեջանի խորհրդի նախագահությունն անհրաժեշտ է համարում մատնանշել հետևյալ ընկերների լավ աշխատանքի որինակները. — Ընկ. Բաղիրով — Մեքենաշինություն, Խաչատուրով — Շոֆերների, Կարայան — Կոոպերացիա և պետառևտուր, Զոտին — Ալրաղացների, Գրեկ — Ոբշչեպիտ, Բուրակով — Քաղաքային ձեռնարկություններ և Նավթագործների միության ինֆորմատորներին (ընկ. Լապշին) և ցեմենտակղմինդրագործների միությունից (Լոբակ), և առաջարկում է միության մատնանշված կենտրոնական վարչություններին քննել վերև հիշված ընկերներին պրեմիա տալու հարցը:

Միևնույն ժամանակ Պրոֆմիությունների Ադրբեջանի խորհրդի նախագահությունը առաջարկում է բոլոր միությունների կենտրոնական վարչություններին քննել լավագույն աշխատանքի

որինակների համար ստորին պրոֆկազմակերպությունների առանձին աշխատողների յեղած փոնդերի սահմաններում պրեմիա տալու հարցը:

Յես գտնում եմ, վոր ավելորդ են այս փաստաթղթի վերաբերմամբ մեկնաբանությունները:

Իհարկե պրոֆմիությունների աշխատանքի համար պատասխանատու յենք մենք, Ադրկոմկուսի (բ) կենտկոմն ու Բաղկոմը: Այդ մասին յես խոսել եմ Բաքվի համաքաղաքային պրոֆակտիվում: Բայց ընկերներ, չէ վոր պետք է պրոֆմիութենականներից պահանջել, վոր նրանք կոնկրետ աշխատանք տանեն: Առանց ամրապնդելու այդ լծակը — պրոֆաշխատանքի լծակը վերևից մինչև ներքև, մեզ համար դժվար կլինի աշխատանքը բարձրացնել: Մենք չենք կարող թույլ տալ, վոր Բաքվում, այդ կարևորագույն արդյունաբերական կենտրոնում, վոր պրոֆմիութենական աշխատանքը հետ մնա այն խնդիրներից, վորոնց մեր առաջ են դնում կուսակցությունն ու յերկիրը. ահա թե ինչու մենք այսոր այդպես սուր ենք դնում մեր պրոֆմիությունների աշխատանքի հարցը:

Ադրկոմկուսի (բ) կենտրոնական և Բաքվի կոմիտեները անհրաժեշտ են համարել ամրապնդել Նավթագործների Ադրբեջանի կոմիտեյի ղեկավարությունը և այդ կոմիտեյի նախագահի պաշտոնին են առաջ քաշել աճող աշխատող՝ Շահումյանի ռայկոմի նախկին քարտուղար, այժմ Բաղխորհրդի նախագահի տեղակալ՝ ընկ. Կատկովին:

Այժմ անցնենք Ազնեֆթի սպասարկող գործարանների հարցին: Յես չեմ խոսի բոլոր գործարանների մասին: Միայն մի քանի խոսք կասեմ Շմիդտի անվան վճռական գործարանի մասին: Աշխատանքն այն տեղ վատ է դրված: Մանավանդ վատ են աշխատել հուլիս ամսին: Մի շարք վորակյալ բանվորներ են կորցրել: Հուլիս ամիսը գործարանի համար—դա մի տիպիկ, յեթե վոչ համատարած, ինքնահոս է: Մեքենայական ցեխում տանոկների հրեշավոր պարապուրդներ են լինում: 55 հազար տանոկաժամ ընդհանուր կարողությունից — 17 հազար տանոկաժամ պարապուրդ: Պողպատաձուլարանում 14 տոկոս բրակ: Իրարանցում, անկազմակերպ աշխատանք: Չկա համախմբված ղեկավար կոլլեկտիվ: Գործարանը կառավարող ապարատի ու հրամանատար կազմի խառնաշփոթության մեջ է: Ընկեր Շմիդտցիներ, այդպես գործը առաջ չի գնա, պետք է անհապաղ թե Շմիդտի գործարանում և թե մյուս գործարաններում վերակառուցել աշխատանքները այն ծրագրի համապատասխան, վոր Ազնեֆթին է տրված: Պետք է վճռականորեն առաջ շարժել գործարանների աշխատանքը, նրանցից յուրաքանչյուրի առաջ կոնկրետ խնդիր դնել և պայքարել այդ խնդրի իրացման համար:

## ՄԵԾ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ

Հետո, ընկերներ, մի մեծ հարց, վոր մեր առաջ է կանգնած, դա բանվորների մատակարարումը բարելավելու հարցն է: Մենք իհարկե, վերջին ժամանակներս քիչ նվաճումներ չունենք նավթագործներին մատակարարելու գործում: Մեզնում չահագործման են մտցված յերեք ֆաբրիկ-խոհանոցներ, վորոնք որական 150 հազար ճաշ են տալիս: Հաս. սնունդը սպասարկում է Ազնեֆթի գրեթե բոլոր բանվորներին ու ծառայողներին, հացագործարան, մասկոմբինատ ենք կառուցել, Բաքվում ցանել ենք 11,911 հեկտար—պլանի 102 տոկոսը: Քաղաքամերձ տնտեսությունները պետք է անցյալ տարվա 26 հազարի տեղ, 70 հազար տոնն բանջարեղեն տան: Ձուկ է վորսված 48815 ցենտներ բան. մատ. բաժինների և Սպառողական ընկերությունների Բաքվի միության ձկնորսարաններում:

Բոլոր այն ֆոնդերը, որ նշանակված են Բագվի և նավթագործների համար, պարենային ֆոնդերն ու արդյունաբերական ապրանքները լրիվին ստացված են. իսկ մի քանիսը նույնիսկ ավելցուկով: Բացի ֆոնդայինից հատատուն գներով նավթագործներին պարենային ապրանքներ է տրված մի միլիոն 200 հազար ռուբլու, արդյունաբերական ապրանքներ 942 հազար ռուբլու: Մենք այդ ժամանակամիջոցում բանվորական մատակարարման շատ բան ենք արել: Բայց յեթե այսոր, մենք հարց դնենք, թե արդյոք մատակարարման վերաբերմամբ մեր կոնկրետ աշխատանքը մթերքները կանոնվոր բաշխել կարողանալը, ճաշարաններում հասարակական սննդի և մյուս ասպարեզներում գործը հարթել կարողանալը, համապատասխանում է այն խնդիրներին, վոր մեր առաջ են դրված, — յես դրական պատասխան չեյի տա: Մատակարարման ասպարեզում մենք դեռ՝ շատ վատ ենք աշխատում: Յերբեմն աշխատանքը մեզնում գնում է այն հուշակավոր «կոնվեյերի» վոգով, վոր սահմանված է Մոնտինի անվան գործ. ճաշարանում: Դա մի ավանտյուրա յե Բագվում, վորի համար առանց գործի եյության մեջ թափանցելու կոչել են բոլորն ու ամենքը: Մի փոքրիկ ճաշարանում, վորտեղ մի քանի բանվորուհիներ կարող են լրիվ սպասարկել բանվորներին, բերել ինչ վոր արկղներով են լցրել, վորոնց վրայով ինչպես «կոնվեյերով» բանվորները պետք է կերակուր ստանային: Իհարկե, այդ ավանտյուրիստական «կոնվեյերը» չի աշխատում, ճաշարանը նեղվածք է և կեղտոտ, իսկ այդ բանի համար քամուն են տվել 80000 ռ.: Մի՞թե կարելի յե այդպես աշխատել: Մի քանի ճաշարաններում անկարգություն, կեղտոտություն: Կան և լավ օրինակելի ճաշարաններ: Մենք քիչ արդյունքներ չե վոր ունենք մեր աշխատանքում բանվորական մատակարարման բաժիններ ստեղծելուց հետո:

Դրական՝ յերևույթ պետք է համարել այն հանգամանքը, վոր բանվորական մատակարարման բաժինե-



րի շրջանառությունները, հասարակական սննդի հետ միասին կազմել են 52,250 հազար ռուբլի: Յեթե այդ գումարին ավելացնենք հացի արժեքը, վոր նավթագործներն են գնում սպառողական ընկերությունների Բագվի միությունից, այն է 4.250 հազար ռուբլի, ապա շրջանառության ընդհանուր գումարը (56.500 հազար ռուբլի) կկազմի ընդհանուր աշխատավարձի 87 տոկոսը: Այսպիսով Ադնեֆթի յուրաքանչյուր բանվոր ու ծառայող, իր բանվորական մատակարարման բաժնից գնել է (ամսական միջին թվով) 109 ռուբլու:

Առաջին յեռամսյակում ապրանքների բաշխումը բանվորական մատակարարման բաժիններում կատարվել է մեքենայորեն: Առանց ձեռնարկության նշանակության յեվ կարևորության հաշվառման., այսինքն ապրանքներն ուղղակի բաշխվել են բանվորական մատակարարման բաժինների կոնտինգենտների համապատասխան:

Ադնեֆթի բանվորական մատակարարման վարչությունը 2-րդ յեռամսյակից սկսած դիֆֆերենցացրած մատակարարման պրակտիկան է մտցրել Ադնեֆթի ձեռնարկություններում նրանց բաժանելով չորս գրուպպաների: Ինչքան ձեռնարկության կարևորությունը մեծ է, նույնքան նա ավելի յե մթերք ստանում, ըստ. վորում նույնպես դիֆֆերենցացրած է ուժեղացրած մատակարարումը և այդ ուժեղացվում է նայած արտադրական ծրագիրը կատարելուն:

Բայց հենց բանվորական մատակարարման բաժիններում դեռ մինչև այժմ էլ այդ գործը պատշաճ բարձրության վրա չի դրված: Թեև ապրանքները բաշխվում են հարվածայինի գրքույկով, սակայն վոչ մի տեղում չի կատարվում անցյալ ամսում բանվորների ցույց տված գործունեյության ցուցանիշները: Բացի դիֆֆերենցացրած մատակարարման լրացուցիչ մատակարարում է մտցված Ադնեֆթի կարևորագույն հանքամասերում: Այդ գործը պետք է լրիվին կապել արտադրական ծրագիրը կատարելու հետ:

Այդպես, այն հորափորներին, վորոնք իրենց պլանը կատարում են, ամեն ամիս բացի մատակարարման ընդհանուր նորմայից լրացուցիչ կերպով տրվում է—

Շաքար — 1 կլգ. — 1½ կլգ.
Ալյուր — 2 կլգ. — 3 կլգ.
Բրինձ — 2 կլգ. — 3 կլգ.
Բուսական յուղ ½ լիտր — 1 լիտր:
Կենդանու յուղ — 400 գրամ — 600 գրամ
Պանիր — 1 կլգ. — 1 կլգ.
Քաղցրեղեններ — 4 կլգ. — 4 կլգ.
Լվացքի սապոն — 1 կտոր — 1 կտոր.
Ծոթեղեն — 5 մետր — 10 մետր:

Առաջին դեպքում յեթե հորափորը պլանը կկատարի 100–110 տոկոսը, 2-րդ դեպքում, յեթե 110 տոկոսից ավելի կկատարի:

Բացի դրանից բոլոր հորափորներին լրացուցիչ կերպով որական 200 գրամ հաց է տրվում: Այսինքն 8 հարյուր գրամի փոխարեն ստանում է որական 1000 գրամ:

Ոգոստոսից սկսած բացի լրացուցիչ նորմաներից հորափորի ընտանիքը (յեթե հորափորը պլանը կատարում է) հասարակական սննդի մատակարարման կըվերցվի և բացի դրանից հատուկ անցաթուղթ կտրվի հերթից դուրս բոլոր մթերքներն ու ապրանքներն առանց բացառության ստանալու:

Բանվորական մատակարարման բաժիններ ստեղծելու գործը դրական հետևանքներ է տվել նավթարդյունաբերության հետ անմիջական առնչություն չունեցող անձանց, դուրս մղելու տեսակետից: Այդպես մինչև բանվորական մատակարարման բաժինների ստեղծվելը նավթարդյունաբերությանը սպասարկող և բանվորական մատակարարման բաժինների իրավունքին անցած փակ բանկոոպներին ամրացված բանվորների ու նրանց խնամարկյալների քանակությունն անցյալ տարվա դեկտեմբերին կազմել է — բանվորներ, ծառայողներ ու նրանց խնամարկյալներ 247,451 հոգի, իսկ



բանվորական մատակարարման բաժիններ կազմակերպելուց հետո այդ թիվը հունվարին կրճատվել և հասել է 192.434 հոգու:

Այդպիսով մաքրվել են արտադրության հետ վոչ մի կապ չունեցող անձնավորություններից՝ 55,017 հոգի:

Դեռ ևս վատ է կազմակերպված լետուններին դեմ տարվող կռիվը: Մանավանդ վերջին ժամանակներս, վոչ միայն այդ գործին ուշադրություն չեն դարձնում — այլ և բանուժի պակասության պատճառով հանցավոր կերպով քաջալերում են: Բանվորական մատակարարման բաժինների վարչության և բանվորական մատակարարման բաժինների առաջ բանվորական մատակարարման ասպրեզում, հետևյալ հիմնական խնդիրներն են դրված:

1) Ստեղծել բանվորական մատակարարման տեխնիկական խոշոր բազա — խանութների վերակառուցում և կառուցում, մանավանդ նոր ռայոններում պահեստների, կուլտուրական առևտրի համար սարքավորման արտադրություն:

2) Ծավալել մթերումները, մթերողական ռայոններում բազա ստեղծելու պայմանով (ընդունման, մըշակման կետեր և այլն) կոլխոզների հետ երկուստեք պայմանագրեր կնքելու հիմունքով:

3) Խորացնել դիֆֆերենցացրած մատակարարման գործը, վորը տնտեսավարների հիմնական աշխատանքն է հանդիսանում, բանվորական մատակարարման բաժինների ղեկավարման, Ազնեֆթի բոլոր վճռական տեղամասերի վրա դիֆֆերենցացրած մատակարարումը տարածելու վերաբերմամբ:

4) Առանձնապես մատակարարում մտցնել նոր ռայոններում:

5) Ապահովել ձմրան բանջարեղենի ներմուծումը (կարտոֆել, կաղամբ, վարունգ, սոխ և այլն): Այդ բանջարեղենի տեղավորելն ու պահելը վոչ միայն բանվորական մատակարարման բաժինների վարչության–

ների, այլև ամբողջ Բաքվի կազմակերպության խնդիրն է հանդիսանում և այդ բանի համար պատասխանատվությունն ընկնում է վոչ պակաս չափով քան մատակարարման բաժինների վարչությունների, այլև ռայկոմների քարտուղարների, ռայխորհուրդների նախագահների, նավթահանքերի ու ձեռնարկությունների դիրեկտորների և պրոֆմիությունների վրա:

Մենք պետք է ուշադրությամբ զբաղվենք բանվորական մատակարարման բաժինների վարչության յեվ բանվորական մատակարարման բաժինների տնտեսությունով: Պարզ կերպով լուծել կազմակերպչական հարցը, վորոշել բանվորական մատակարարման բաժինների վարչության և բանվորական մատակարարման բաժինների տեղը, մասնավորապես պետք է անհապաղ վճռել վոր բանվորական մատակարարման բաժինների ղեկավարները, վոչ թե մատակարարման կոմբից դիրեկտորների ոգնական են հանդիսանում, այլ տեղապահներ: Մենք պետք է այնպիսի աշխատանքի հասնենք, վոր բանվորների մատակարարման գործը, վոր բանվորների մասին հոգալու գործը լինի ամբողջ կուսակցական կազմակերպության, բոլոր տնտեսավարների ու պրոֆմիութենական աշխատողների գործը: Մեր կուսակցական կազմակերպությունները դեռ քիչ են ուշադրություն դարձնում այդ գործին: Անհաշիվ կերպով շաղլում են փողերը: Օրինակ. վերցրեք Լենինյան նավթահանքի բանվորական մատակարարման բաժնի բանջարանոցը: Հիմնական գումար ծախսված է 81 հազար ռուբլի, շահագործական 90 հազար ռուբլի: Իսկ բանջարեղեն, գիտեք ինչքան են ստացել—18000 ռուբլու (ծիծաղ): Իսկ Լենինյան ռայոնի հորատման յերկրորդ ցեխը ծախսել է 43·000 ռուբլի, իսկ բանջարեղեն ստացել 52 հազար ռուբլու: Նշանակում է, կարելի յե ավելի լավ աշխատել և կարելի յե ավելի արդյունավետ կերպով ծախսել պետական փողերը — բանվորական կոպեկները: Պետք է բոլոր այդ հարցերը, ինչպես բանվորական



բանջարանոցները և ձկնորսարաններ են (այստեղ քիչ չեն այնպիսի հարցեր, վորոնք շատ լուծում են պահանջում), ճաշարաններն են, հասարակական սնունդն է, բանվորական դիֆֆերենցացրած մատակարարումն է, նոր ռայոնների լավագույն սպասարկումն է և այլն—ավելի կոնկրետ դնել, այնպես, վոր նրանք համապատասխանեն այն խնդիրներին, վորոնք այսոր դրված են մեր Բաքվի կազմակերպության առաջ:

## ՊԱՏՎՈՎ ԿԱՏԱՐԵՆՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ընկերներ, դեռ շատ հարցեր կան, բայց յես բոլորն այստեղ չեմ շոշափի: Յես խոսեցի հանդույցային հարցերի մասին, վոր անհրաժեշտ է ամենքին, ինչպես հարկն է բացատրել ու կռվել նրա համար. վոր մեզ տրված մեծ պլանը կատարեյինք:

Մենք անշուշտ զգալի կերպով բարելավել ենք կուսակցական աշխատանքը: Մեզ մոտ կուսակցական որն իր արժանի տեղն է գրավել Բաքվի կազմակերպության մեջ: Բոլշևիկյի ակտիվությունն աճել է, աճել է նրա ավանգարդային դերը նավթի համար մղած պայքարում, բայց այդ բոլորը դեռ բավական չի: Ագիտացիոն – մասսայական աշխատանքի բնագավառում՝ մենք դեռ հետ ենք մնում: Ձեզնից շատերը, հավանական է, յեղել են մասսայական ագիտացիայի խնդիրների մասին իմ տված զեկուցմանը. յես այդ հարցը մանրամասն կերպով դրի, հարց դրի մասսայական ագիտացիայի հետ մնալու մասին, այն խնդիրներից, վորոնք մեր առաջ են դրված:

Մեզ անշուշտ անհրաժեշտ է — ավելի լավ դասավորել մեր կուսակցական ղեկավար ուժերը: Յես արդեն ասացի, վոր Լենինյան ռայկոմի քարտուղար ենք հաստատել ընկ. Ախունդ Զադեյին, Որջոնիկիձեյի անվան ռայկոմի քարտուղար ենք հաստատել ձեզ ամենքիդ հայտնի Մուզաֆար Նարիմանովին, վոր մեր դե–

կավար կոլեկտիվում խոշոր ու ընդունակ աշխատողներից մեկն է: Կալա նավթահանքը, վորը այսօր բացառիկ կարևորություն է ստանում, այլևս չի կարելի այն դրության մեջ թողնել, վոր այնտեղ չլինի վոչ կուսակցական և վոչ էլ տնտեսական կենտրոն, —այդ նավթահանքում մենք կուսկոմի քարտուղար ենք հաստատել ընկ. Սաֆար Հյուսեյնովին:

Մեր առաջ դրված մեծ խնդիրը լուծելու համար՝ բոլշևիկները պետք է կարողանան կազմակերպված ձեվով վերակազմել իրենց շարքերը, ավելի լավ դասավորել իրենց ուժերը: Մենք Ադրկոմկուսի (բ) Բաքվի կոմիտեյի կազմբաժնի վարիչ ենք հաստատել ընդունակ ու խոշոր աշխատող ընկ. Բոնդարենկոյին, վորը յեղել է Անդրյերկրկոմի ագիտմասսբաժնի վարիչ:

Ընկերներ, յես չեմ կասկածում, վոր մեր աշխատանքի մեջ յեղած համախմբվածության շնորհիվ Բաքվի կազմակերպությունը, վորը յեռանդով գործում է, մի կազմակերպություն, վորն այսօր իրեն առաջավոր Բաքվի պրոլետարների սեղմ, համախմբված ջոկատն է ներկայացնում, անշուշտ դուրս կբերի այն խնդիրները, վոր դրվում են մեր առաջ: Յեվ առանձին մարդիկ և մարդուկներ, վորոնք՝ նայելով թե ինչպես է բարձրանում կամ իջնում նավթահանության կորագիծը, փորձում են ինչպես բիրժայում խաղ անել իրենց կոմբինացիոն նպատակներով, — դրանք անհատներ են, թզուկներ են, վորոնք ջարդ ու փշուր կլինեն Բաքվի բոլշևիկների միահամուռ պարսպին զարկվելով:

Այն պայմանը, վոր մենք ունենք Անդրկովկասում՝ ժողովրդական տնտեսության պլանի բոլոր տեղամասերում յեղած գործարար աշխատանքի ու մարտական պայքարի մթնոլորտ, — այդ գլխավորագույն նախադրյալներից մեկն է, վորպեսզի մեր առաջ դրված բոլոր խնդիրները մենք մարտականորեն կատարենք: Ընկերներ, չեմ կասկածում, Բաքվի բոլշևիկների մեր ջոկատը, մեր կուսակցության Կենտկոմի լավագույն ջոկատներից մեկը, մեր կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի ջոկատը, նրա հավատարիմ ջոկատը, համապետական կարևորագույն նշանակություն ունեցող մարտական դիրեկտիվը — ժամանակին տալ յերկրին լրացուցիչ 100 հազար տոններով նավթ, վոր նշանակում է ոգնել ցանքսի կամպանիային, նշանակում է վճռել պաշտպանության կարևորագույն հարցերը նշանակում է վճռել վալյուտայի կարևորագույն խնդիրները:

Այստեղ նստածներից ամեն մեկը պետք է իմանա, վոր ինչ տեղամասում էլ աշխատելիս լինի, թեկուզ գործարանի դիրեկտոր է, նավթահանքի դիրեկտոր, հորափոր վարպետ, կամ բջիջի քարտուղար, կամ շարքային բանվոր — մենք ամենքս գործն այնպես պետք է կազմակերպենք, վոր մեզնից ամեն մեկը ըմբռնի մեր առաջ դրված խնդրի քաղաքական կարևորությունը, վոր մենք ձեզ հետ միասին միասնյա կամքով, գործունեյության միասնությամբ, սեղմ շարքերով, ձեռներս քշտած գործի անցնենք և կարողանանք ասել մեր կուսակցության Կենտկոմին — ընկ. Ստալինին, —

— Մեր կուսակցության ու խորհրդային ամբողջ յերկրի կողմից Բաքվի կազմակերպության առաջադրած խնդիրը մենք պատվով, բոլշևիկորեն կատարել ենք: (Յերկարատև, բուռն ծափահարություններ):

ՀԱՎԵԼՎԱԾ № 1.

# ՆԱՎԹԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԱՆԴՐՅԵՐԿՐԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ, ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՅԵՎ ԲԱԳԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԻՍՏԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

(Հավանություն է գտել Ադրկոմկուսի (բ) Բագկոմի պլենումի և Բագվի կազմակերպության ակտիվում 1933 թ. օգոստոսի 9-ին)

Առաջին կիսամյակում Ադնավթում ստացված է 6,699 130 տոնն նավթ. Պլանը կատարված է 101,6%։ Սակայն նավթահանման մեքենայացրած մասը հետ է մնում. Մեքենայացրած նավթահանման պլանը կատարված է 92%-ով։ Մանավանդ հետ է մնում հորափորումը. Հորափորման պլանը կատարված է 68,3 տոկոս, ավարտված հորերի վերաբերյալ 65,2% և արագության վերաբերյալ 69,9%։ Նավթահանման հուլիսի պլանը կատարված է ընդամենը 89,9%։ Պլանից 130,000 տոնն նավթ պակաս է ստացվել։ Օգոստոսի առաջին 8 օրում պակաս է ստացվել մոտ 25.000 տոնն նավթ։

Հորափորման այդ անմխիթարելի հետ մնալը. շահագործման մեջ մի շարք խոշոր թերությունները և հուլիս ու օգոստոս ամիսների նավթահանման պլանի թերակատարումը՝ հետևանք է այն բանի, վոր մինչև այժմ չեն կատարված Անդրյերկրկոմի, Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի և Բագվի Կոմիտեյի մի շարք կարևորագույն ցուցմունքները, յուրաքանչյուր հորի ու նավթահորի տնտեսական-տեխնիկական ղեկավարության բարելավման, բանվորական ուժի հոսունության վերացման, վարպետի դերի բարձրացման, նոր նավթային ռայոնները յուրացնելու աշխատանքի ուժեղացման, աշխատանքային դիսցիպլինայի վճռական բարձրացման մասին և այլն։

Ադնավթի աշխատանքում յեղած այդ խոշորագույն թերությունները տեղի յեն ունենում և այն պատճառով, վոր կոմունիստներն ու անկուսակցական ակտիվիստները, Ադնավթի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները, վորոնք մի անգամ չե, վոր նավթի համար բոլշևիկյան պայքարի օրինակ են ցույց տվել, վերջին ժամանակներս առանձին տեղամասերում թուլացնում են տեմպերը և բավական չափով չեն գիտակցում այն խոշոր պատասխանատվությունը, վոր նրանց վրա յե ընկած խորհուրդների յերկիրն վառելիքով ապահովելու գործում։

Այդ խոշորագույն թերությունները առավել ևս միանգամայն անհանդուրժելի և առանձնապես վտանգավոր են դառնում այն խնդիրների դիմաց, վոր կուսակցությունն ու կառավարությունն են դնում — նավթահանումն ավելացնելու, հորափորման ծրագիրը վճռականորեն ընդարձակելու, նոր ռայոններ յուրացնելու և 1934 թվի համար նախապատրաստվելու ասպարեզում։

Բագվի կուսկազմակերպության և նավթագործ բանվորների և Ադնավթի ինժեներա-տեխնիկական աշխատողների առաջ դրված են հետևյալ խնդիրները.—

Մինչև նավագնացության վերջանալը 1933 թվին բացի գործառնական պլանից՝ հանել վոչ պակաս քան 500.000 նավթ, կամ մինչև նոյեմբերի 15-ը այսինքն մինչև նավագնացության վերջը՝ 6618 հազար տոնն,

իսկ մինչև 1933 թվի վերջը 2 րդ կիսամյակի համար —8 միլիոն, 688 հազար տոնն։

Վերացնել հորափորման գործում հետ մնալը՝ ապահովել նոր ռայոններում լրացուցիչ հորափորման պլանի իրագործումը, մինչև 1933 թվի վերջը սկսել փորել 300 նոր նավթահորեր, վորոնցից մինչև սեպտեմբերի վերջը ավարտել և շահագործման հանձնել 85 նավթահոր։ Ադնեվթում 1934 թվին նավթահանման բարձրացումն ապահովել վոչ պակաս քան մինչև 20 միլիոն տոնն։

Այդ խնդիրներն իրականացնելու համար Անդրյերկըկոմի քարտուղարության Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի և Բագկոմի բյուրոների միացյալ նիստը ՎՈՐՈՇՈՒՄ Է.—

I

Առաջարկել Ադնեվթին հորափորման ասպարեզում կենսագործել հետևյալ միջոցառումները.

Միկոյանի անվան նավթահանքում (Լոկ-Բատան) հորափոր ստանոկների թիվը ոգոստոսին հասցնել 39-ի, իսկ դեկտեմբերին մինչև 60-ի։

Կալայում՝ ստանոկների թիվը ոգոստոսին հասցընել մինչև 40 ի, դեկտեմբերին՝ մինչև 60-ի։

Արտեմի կղզու նավթահանքում ոգոստոսին մինչև 16 ստանոկի, դեկտեմբերին մինչև 40-ի։

Օրջոնիկիձեյի անվան նավթահանքում՝ ոգոստոսին 36 ստանոկ, դեկտեմբերին 40-ը։

Ստալինի անվան նավթահանքում՝ ոգոստոսին 59 ստանոկ, դեկտեմբերին 69-ը։

Կագանովիչի անվան նավթահանքում ոգոստոսին 32 ստանոկ, դեկտեմբերին 65-ը։

Մոլոտովի անվան նավթահանքում ոգոստոսին 11 ստանոկ, դեկտեմբերի 23-ը։



Կիրովի անվան նավթահանքում ոգոստոսին 17 ստանոկ, դեկտեմբերի —24ը—,

Հանձնարարել ընկ. ընկ. Ռուբենին, Բարինովին, Մելերզադեին, Ագրբային, Պետերսոնին կազմված հանձնաժողովին—5 որում մշակել 300 նոր հորերի փորման պլանը կատարելու համար նոր ռայոններում լրացուցիչ 32 ստանոկ գնելու հարցի մշակումը։

Միկոյանի անվան և Կալայի նավթահանքերում հորափորման մեծացրած պլանները կատարելու համար ոգոստոս ամսին ներքին ռեսուրսներու մոբիլիզացիայի յենթարկելու հետևյալ պլանն ընդունել։

Լենինյան նավթահանք.—հորափորման գրասենյակի կառավարիչ ընկ. Տյուխտենեվը և ռայկոմի քարտուղար ընկ. Ախունդ-Զադեյի պատասխանատվությամբ՝ հորափորական սարքավորման 10 լրիվ կոմպլեկտ ջոկել իրենց գործիքներով ու շարժիչներով։

Կիրովի անվան նավթահանք.—

Հանքի դիրեկտոր ընկ. Հասանովի և ռայկոմի քարտուղար ընկ Ջաֆարովի պատասխանատվությամբ հորափորման սարքավորման 10 լրիվ կոմպլեկտ ջոկել իրենց գործիքներով և շարժիչներով։

Կագանովիչի անվան նավթահանք — հորափորման գրասենյակի կառավարիչ ընկ. Կոչալևի և կուսկոմի քարտուղար ընկ. Կուդաշեվի պատասխանատվությամբ՝ հորափորական սարքավորման յերեք լրիվ կոմպլեկտ ջոկել իրենց գործիքներով ու շարժիչներով.

Մոլոտովի անվան նավթահանք.—հորափորման գործերի դիրեկտորի ոգնական ընկ. Կամիշանսկու յեվ կուսկոմի քարտուղար ընկ Դոնսկոյի պատասխանատվությամբ՝ հորափորական սարքավորման յերեք լրիվ կոմպլեկտ գործիքներ և բացի դրանից 1.100 մետր յավ 6 դյույմանոց հորափորական խողովակներ առանձնացնել։

Ստալինի անվան նավթահանք.—Հորափորման կառավարիչ ընկ. Կոխի և ռայկոմի քարտուղար ընկ. Ագս

պովի պատասխանատվությամբ՝ հորատորական սարքավորման 6 լրիվ կոմպլեկտ և 2000 մետր 6 դյուժանոց հորատորական լավ խողովակներ առանձնացնել։

Օրջոնիկիձեի անվան նավթահանք.— Հորատորման գրասենյակի կառավարիչ ընկ. Փիրի-Գուլիևի և այլ կոմի քարտուղարի պատասխանատվությամբ՝ Լոկ-Բատանի համար 4200 մետր 6 դյույմանոց հորատորական լավ խողովակներ հատկացնել։

Այն նավթահանքերը, վորոնք Միկոյանի և Կալայի նավթահանքերի համար սարքավորում և գործիքներ են հատկացնում, պետք է ամբողջ սարքավորումները, քանդելը, բեռնելը և հանձնելը, ինչպես և ստանողները տեղերում հավաքելը կանոնավոր կատարեն։

Օրջոնիկիձեի անվան նավթահանքը պետք է հանքի դիրեկտոր ընկ. Բորցի և այլկոմի քարտուղար ընկ. Մուզաֆար Նարիմանովի պատասխանատվությամբ Կալայում գնելու համար մոբիլիզացիայի յենթարկի 18 ստանոկ. դրանցից 11-ը վերաբաշխելով շահագործական-հետախուզական և խոր շահագործական հորատորությունից։

Ազնեֆթի կառուցողական գրասենյակը ընկ. Մակարովի պատասխանատվությամբ՝ պետք է նոր ռայոններում նավթաբուրգային շինարարության հետեվյալ պլանի իրագործումն ապահովի։

Կալայում Մամեդովի և Զեյրիժիվի պատասխանատվությամբ՝ մինչև օգոստոսի 10-ը՝ 7 վիշկա, մինչև օգոստոսի 15-ը՝ 7 և մինչև օգոստոսի 20-ը՝ 5 վիշկա։

Միկոյանի անվան նավթահանքում.— Ընկ. Դանիլովի պատասխանատվությամբ մինչև օգոստոսի 5-ը՝ 10 վիշկա, մինչև օգոստոսի 15-ը՝ 15 և մինչև օգոստոսի 25-ը՝ 10 վիշկա։

Արտեմի կղզում.— ընկ. ընկ. Սուլեյմանովի և Կամիսկիրցևի պատասխանատվությամբ մինչև օգոստոսի 5-ը՝ 6 վիշկա, մինչև օգոստոսի 25-ը՝ 6 վիշկա։



Միկոյանի անվան նավթահանքում ստանոկներ գնելու համար ստանոկ հավաքող բրիգադներ պետք է մոբիլիզացիայի յենթարկեն՝ Լենինի նավթահանքը 3 բրիգադ, Կիրովի նավթահանքը 3 բրիգադ։ Այդ բրիգադները ընտրելու ժամկետ են նշանակվում օգոստոսի 10-ը, Պատասխանատվությունը դնել Տյուխտենևի, Հասանովի և այլկոմների քարտուղարների վրա։

Լոկ-Բատանի համար մոբիլիզացիայի յենթարկել և 14 հոգուց բաղկացած բրիգադներ ուղարկել.— Կիրովի անվան նավթահանքից — մինչև օգոստոսի 10-ը՝ 5 բրիգադ, Լենինի անվան նավթահանքից մինչև օգոստոսի 10-ը՝ 7 բրիգադ, Ստալինի անվան նավթահանքից մինչև օգոստոսի 12-ը՝ 5 բրիգադ։ Պատասխանատվությունը դնել Տյուխտենևի, Կոխի, Հասանովի և այլկոմների քարտուղարների վրա։

Հանձնարարել Ազնեֆթին, վոր 10 օրում 2-րդ կիսամյակի համար շահագործական հետախուզական և հետախուզական հորատորման գործառնական պլան մշակի յելնելով հին հրապարակներում նոր հորատորման ֆոնդեր ժամանակին յերևան հանելու և նոր հրապարակներում ֆոնդեր հայտնաբերելու խնդիրներից՝ և յելնելով 1934 թվի նավթահանությունը վոչ պակաս քան 20 միլիոն տոննով ապահովելու համար։

Հորատորման ասպարեզում նավթարդյունաբերության առաջ դրված խնդիրները պահանջում են, վոր կուսակցական, տնտեսական, պրոֆմիութենական, կոմյերիտական կազմակերպությունները անշեղ կերպով սիստեմատիկ ուշադրություն դարձնեն հորատորման հարցերին։ Այդ խնդիրները պահանջում են յուրաքանչյուր հորը անպայման ճիշտ ժամկետում ավարտել և շահագործման հանձնել։ Պահանջում են առանձին ուշադրություն դարձնել նոր ռայոնների հորատորման աշխատանքին այդ նոր ռայոններին հին ռայոնների կողմից սարքավորումով, կադրերով և փորձով օգնելու գործում։

## II

Հաստատել Ազնեֆթի նշած հետևյալ պլանն ու միջոցառումները նավթահանման գործում ըստ ռայոնների։

Լենինյան նավթահանք.—Միջին օրական նավթահանությունը մնացած 5 ամիսների համար 9719, կես տարվա նավթահանությունը 1,752,100 տոնն օգոստոսից մինչև 1933 թվի նոյեմբերի 15-ը—1,047,100 տոնն,

Հորափորությունից օգոստոսին շահագործման մտցնել մինչև օգոստոսի 3-ը հետևյալ նավթահորերը. №№ 771, 783, 778, 774 մինչև օգոստոսի 30-ը 770, 794, 768, 781, 797 հորերը, մինչև օգոստոսի 31-ը 885 և 886 հորերը, մինչև օգոստոսի 27-ը 796 հորը, մինչև օգոստոսի 29-ը. 355 հորը, մինչև օգոստոսի 20-ը 798, և մինչև օգոստոսի 28-ը 814, 901 ու 882 հորերը,

Սեպտեմբերին 813, 849, 562, 887, 889, 776, 881 հորերը։

Հոկտեմբերին 886, 906, 823, 801, 779, 825, 893 հորերը,

Նոյեմբերին 760, 153, հորերը,

Դեկտեմբերին 862, 868, 829 հորերը։

Յերկրորդ կիսամյակում բոլոր նոր հորերից ստանալիք նավթի քանակություն սահմանել 438,522 տոնն, Նորոգումից վերադարձնել և շահագործման մտցնել հետևյալ նավթահորերը։

Օգոստոսին 215 հորը մինչև օգոստոսի մեկը, 362—մինչև օգոստոսի 3-ը, 205—մինչև օգոստոսի 8-ը, 184—օգոստոսի 9-ը, 326—օգոստոսի 12-ը, 210 օգոստոսի 17-ը, 124, 227, 187 մինչև օգոստոսի 18-ը, 193 մինչև օգոստոսի 15-ը, 337 մինչև օգոստոսի 26-ը և 161—օգոստոսի 25-ը,



Սեպտեմբերին №№ 187 և 796 նավթահորերը։

Յերկրորդ կիսամյակում նորոգվող հորերի տված նավթի ընդհանուր քանակությունը սահմանել՝ 703,149 տոնն։ Կանգնած հորերից սեպտեմբերին շահագործման մտցնել յերեք նավթահոր։ Կանգնած հորերից յերկրորդ կիսամյակում ստանալիք նավթի քանակությունը սահմանել 8 851 տոնն։ Հին հորերից մի կիսամյակում հանել 1,239,578 տոնն։

Օրջոնիկիձեյի անվան նավթահանքում մնացած հինգ ամիսների համար միջին օրական նավթահանությունը սահմանել 15,621 տոնն, Յերկրորդ կիսամյակի նավթահանությունը 2,772,100 տոնն, Նավթահանման քանակությունը օգոստոսից մինչև նոյեմբեր—1,739 750 տոնն,

Հորափորությունից շահագործման մտցնել հետևյալ հորերը—

Օգոստոսին №№ 579 մինչև օգոստոսի 7-ը, 546—մինչև 5-ը, 641—մինչև 6-ը, 544-ը մինչև 10-ը, 566—մինչև 20-ը, 710-ը մինչև 20-ը, 638-ը մինչև 14-ը, 546—մինչև 15-ը, Կալայի № 32-րդ մինչև օգոստոսի 10-ը, Կալայի № 28-ը մինչև օգոստոսի 20-ը,

Սեպտեմբերին № 544 հորը և Կալայում 27-ը, 29-ը, և 40-ը,

Հոկտեմբերին 568, 343, 452, 665 և 660 ու Կալայում 45, 46 և 47,

Նոյեմբերին՝ 664, 567, 668, 672,

Դեկտեմբերին՝ 669, 670 և 640,

Յերկրորդ կիսամյակում բոլոր նոր հորերից ստանալիք նավթի քանակությունը սահմանել 1,307,721 տոնն,

Նորոգումից և կանգնած հորերից շահագործման վերադարձնել հետևյալ հորերը,

Օգոստոսին—№ 344-ը 1-ին, 123-ը—20-ին, 695-ը—11-ին, 679-ը—15-ին, 712 և 652—25-ին, 730—

20-ին, 21—20-ին, 624—15-ին, 794—15-ին, 619—20-ին։

Սեպտեմբերին—№ 217, 650, 142, 687, 316, 574, 499. 129.

Հոկտեմբերին—165, 352, 331, 555, 263, 356, 165, 172, 188, 697, 7421/39 38.

Նոյեմբերին—573, 136, 143, 167, 170, 315, 76173, 75792, 75779, 7698. 554.

Դեկտեմբերին—206, 795, 146.

*Յերկրորդ կիսամյակում նորոգվող հորերը պետք է տան՝ 171, 249 տոնն,*

*Կանգ առած հորերից շահագործման դնել—*

Օգոստոսին—№ 799-7-ին, 834—22-ին, 439—12-ին, և 21—12-ին. *Սեպտեմբերին—4 հոր, հոկտեմբերին—12 հոր, նոյեմբերին—4 հոր, և դեկտեմբերին—12 հոր։*

*Կանգնած հորերը 2-րդ կիսամյակին պետք է տան 70,915 տոնն, հին հորերից այդ կիսամյակին պետք է ստացվի 1,156,265 տոնն նավթ։*

Ստալինի անվան հանք—*Մնացած 5 ամսին միջին օրական նավթահանությունը պետք է հասնի 12,330 տոննի 2-րդ կիսամյակի նավթահանությունը—2,196,200 տոննի։*

*Օգոստոսից մինչև նոյեմբերի 15-ը պետք է ստացվի 1,329,200 տոնն։*

*Հորափորումից շահագործման տալ հետևյալ հորերը։*

Օգոստոսին—№№ 914, 738—մինչև 6-ը, 903—15-ին, 900—12-ին, 1026 և 374—20-ին, 910—20-ին, 859—10-ին, 764—1-ին.

Սեպտեմբերին—№ 915, 842, 840, 930, 839, 1019, 911,

Հոկտեմբերին—№№ 917, 1013, 1029, 1016, 1009, 1021, 1011, 1022, 387, 706, 1010,

Նոյեմբերին—№№ 1008, 792, 381, 375, 921.



Դեկտեմբերին—1017, 392, 1023։

*2 րդ կիսամյակին բոլոր նոր հորերից ընդհանուր նավթահանությունը պետք է հասնի՝ 871,662 տոննի,*

*Նորոգվածներից ու վերադարձվածներից շահագործման մեջ դնել հետևյալ հորերը.—*

Օգոստոսին—№№ 541, 624, 853, 601, 563, 710, 363, 756, 139. 824, 22,

Սեպտեմբերին—№№ 724, 286, 159. 676, 686, 582, 523, 55, 419. 558, 582.

Հոկտեմբերին - №№ 692, 725. 232, 551. 345 365, 494

Նոյեմբերին—№№ 529, 136, 337, 423,

Դեկտեմբերին—№№ 700, 438,

*Նորոգվող հորերի նավթահանությունը 2 րդ կիսամյակում սահմանել 159, 878 տոնն։*

*Կանգ առած հորերից շահագործման մեջ դնել։*

Օգոստոսին—№№ 362—10-ին, 407—10-ին, 359—24-ին, 522—20-ին, 110 և 513—1-ին, 329—25-ին, 135—31-ին, 132—22-ին, 366—18-ին, 336 և 369—10-ին, 189—21-ին, 52—31-ին, 160—15-ին, 31—31-ին,

Սեպտեմբերին—8 հոր և 151, 336։

Հոկտեմբերին—10 հոր։

Նոյեմբերին—10 հոր,

Դեկտեմբերին—10 հոր։

*Կանգնած հորերի ընդհանուր նավթահանությունը վորոշել 65,619 տոնն։*

*Հին հորերից 2 րդ կիսամյակի ընթացքում ընդհանուր նավթահանությունը հասցնել — 1,091,047 տոննի,*

Կագանովիչի անվան հանք.—*Մնացած 5 ամսում օրական միջին նավթահանությունը հասցնել 4.251 տոննի, 2-րդ կիսամյակին հանքը պետք է տա 757,550*

տոնն։ Օգոստոսից մինչև նոյեմբերի 15-ը—474,450 տոնն։

Օգոստոսի ընթացքում հորափորումից շահագործման անցկացնել հետևյալ հորերը.

Օգոստոսին,—№№ 110—3, 103—6-ին, 138—7-ին, 119—12-ին, 39—15-ին, 109—20-ին,

Սեպտեմբերին —№№ 108, 124, 129,

Հոկտեմբերին.— №№ 9, 117, 131 և 97,

Նոյեմբերին—№№ 125, 126, 128, 170, 116, 133, 135, 172, 112,

Դեկտեմբերին—№№ 174, 127, 169, 176, 130, 171։

Յերկրորդ կիսամյակին նոր հորերի ընդհանուր նավթահանությունը հասնելու յե 453 459 տոննի։

Նորոգվածներից ու վերադարձվածներից շահագործման մեջ դնել հետևյալ հորերը.—

Օգոստոսին—№№ 104 և 63—15-ին,

Սեպտեմբերին—№№ 34, 31, 27, 25, 19, 12, 109։

Հոկտեմբերին—№№ 63 և 91,

Յերկրորդ կիսամյակին նորոգված հորերի նավթահանությունը հասնելու յե 45,119 տոննի։ Այդ կիսամյակին հին հորերից պետք է ստացվի 258,938 տոնն,

Միկոյանի անվան հանք (Լոկ Բատան),—Մնացած 5 ամիսներին միջին օրական նավթահանությունը հասնելու յե 2 221-ի։ Յերկրորդ կիսամյակին 360,630 տոնն, Օգոստոսից մինչև նոյեմբերի 15-ը—205,700-ի։

Հորափորումից շահագործման մեջ դնել հետևյալ հորերը.—

Օգոստոսին—№№ 18—11-ին, 41—26-ին, և—40—28-ին,

Հոկտեմբերին —27 հոր,

Դեկտեմբերին—27 հոր։

Յերկրորդ կիսամյակին բոլոր նոր հորերից ընդհանուր նավթահանությունը հասնելու յե 388,130 տոննի,



Հին հորերից ընդհանուր նավթահանությունը հասցնել 9.300 տոննի,

Կիրովի անվան հանք.—Մնացած 5 ամիսներին միջին օրական նավթահանությունը հասցնել—1 564 տոննի։ Յերկրորդ կիսամյակին պետք է ստացվի 247,220 տոնն։ Օգոստոսից մինչև նոյեմբերի 15-ը—172,870 տոնն,

Հորափորումից շահագործման մեջ դնել.—

Օգոստոսին.—91,147—2-ին, 97153, 97151—6 ին, 97139—11 ին, 97150—26-ին, 97144—25-ին, 98131—30-ին և 97120—20 ին։

Սեպտեմբերին—№№ 97158, 97159, 98143.

Հոկտեմբերին—№№ 97154 և 98142 հորեր։

Նոյեմբերին—№№ 97161 և 97162,

Դեկտեմբերին—№№ 971 և 98155,

2-րդ կիսամյակում բոլոր նոր հորերից ընդհանուր նավթահանությունը պետք է կազմի 81,457 տոնն, Նորոգումից և վերադարձումից շահագործության ստցնել հետևյալ հորերը։

Օգոստոսին—97103 մինչև 6-ը, 95059—10 ը։

Հոկտեմբերին—98,080 և 93,076,

Նորոգման հորերից կիսամյակում նավթ պետք է ստացվի 21,110 տոնն,

Հին հորերից մի կիսամյակում ընդհանուր նավթահանության քանակը պիտի հավասարվի 169,100 տոննի։

Արտեմի անվան նավթահանքի Մնացած 5 ամսում միջին-օրական նավթահանությունը պետք է լինի 2297 տոնն։ Յերկրորդ կիսամյակում՝ 406 500 տոնն։ Նավթի քանակությունն օգոստոսից մինչև նոյեմբերի 15-ը 247,800 տոնն։

Հորափորումից շահագործման ստցնել հետևյալ հորերը.—

Օգոստոսին—№№ 148-ը մինչև նույն ամսի 5-ը, 200—մինչև 15-ը, 199—10-ը, 158 20-ը, 140 և 117—1-ը, 202, 315—10-ը։

Սեպտեմբերին—№№ 158 և 160,

Նոյեմբերին—№№ 132 և 196,

Դեկտեմբերին—№№ 263, 188, 161, 124, 185, 139, 220, 109, 115, 193, 202։

2-րդ կիսամյակում—բոլոր նոր հորերից ստանալիք նավթի քանակությունը սահմանել 191,284 տոնն։ Բոլոր հին հորերից կես տարում ստանալիք նավթի քանակությունը սահմանել 214,931 տոնն։

Մոլոտովի անվան Նավթահանք—Մնացած 5 ամսվա համար միջին օրական նավթի քանակությունը—861 տոնն, Յերկրորդ կիսամյակում նավթի քանակությունը—156,060 տոնն,

Նավթահանությունն օգոստոսից մինչև նոյեմբերի 15-ը 93,460 տոնն,

Հորափորությունից շահագործման հանձնել.—

Օգոստոսին—113—մինչև 26-ը, 5—28-ը։

Սեպտեմբերին—39101 և 32 հորերը։

Հոկտեմբերին—41 հոր։

Նոյեմբերին—86 և 168 հորերը։

Բոլոր նոր հորերից կիսամյակում ստանալիք նավթի քանակությունը 78,316 տոնն,

Նորոգումից և վերադարձումից շահագործման հանձնել հետևյալ հորերը.—

Օգոստոսին—96 մինչև 15 և 98—25-ը,

Սեպտեմբերին—54 և 29-ը—15-մինչև 15-ին և 29—15,

Նորոգած հորերից կիսամյակում ստանալիք նավթի քանակությունը պիտի լինի 25,394 տոնն,

Յերկրորդ կիսամյակում հին հորերից ստանալիք նավթի քանակությունը—52,350 տոնն,

Նեֆթե-Ձալա 5 ամսում միջին օրական նավթահանությունը—71 տոնն, Յերկրորդ կիսամյակում հանած նավթի քանակությունը—13,025 տոնն,

Նավթահանությունն օգոստոսից սկսած մինչև նոյեմբերի 15-ը պիտի հավասարվի 7,645 տոննի։



Ազնեֆթի հանքային վարչությունն ընկ. Պետերսոնի պատասխանատվությամբ պետք է մի ամսվա ընթացքում նավթը հանքերից հավաքելու, պահելու և նավթանցքի վարչ. մղման կայանները մզելու միջոցառումներ մշակի՝ համապատասխան նավթահանության լրացուցիչ ծրագրի։

Նավթանցքն ընկ. Բրուխաչևի պատասխանատվությամբ պետք է մի ամսում նավթահանքերից անընդհատ նավթ ընդունելը և գործարանները մղելն ապահովի, յելնելով առանձին հրապարակներում և գրուպպաներում 2-րդ կիսամյակին սպասվող նավթի քանակությունից։

Կուսակցության և կառավարության կողմից նավթահանությունն ավելացնելու վերաբերյալ դրված խոշորագույն խնդիրները պահանջում են նավթային արդյունաբերության բոլոր կուսակցական, պրոֆմիութենական, տնտեսական կազմակերպություններից արմատապես բարելավել շահագործման վերաբերող ամբողջ աշխատանքը։

Անդրյերկրկոմի քարտուղարությունը, Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի և Բագկոմի բյուրոները պահանջում են Ադրկոմկուսի բոլոր ռայկոմներից, հանքերի կուսկոմիտեններից, բջիջներից, դիրեկտորներից, գրուպպաների վարիչներից իսկապես կոնկրետ գործառնական ղեկավարություն ցույց տալ յուրաքանչյուր հորի աշխատանքի վերաբերմամբ, ապահովել ժամանակին տնտեսական-տեխնիկական միջոցառումներ ձեռք առնելը, պայքար կազմակերպել օդի կանոնավոր օգտագործման, ամբողջ կոմպրեսորային տնտեսությունը կատարելապես կարգի բերելու համար, վճռականորեն ռացիոնալացման միջոցներ կենսագործելու նավթահանման պլանների անպայման կատարման համար։

## III

Հեղուկ վառելիքի խնայողությունն ապահովելու համար (մինչև նավագնացության փակումը վոչ պակաս 100 հազար տոննից) կյանքի մեջ մտցնել հետևյալ միջոցառումները.

Նավթաթոր գործարաններն ավելի շատ գազ գործադրելու և ուրիշ միջոցառումներ կիրառելու հաշվին՝ հեղուկ վառելիքի հետևյալ խնայողությունն անեն.

Ստալինի անվան գործարանը 42 հազար տոնն,
Պյատակովի անվան գործարանը 15,300 տոնն,
Վանո Ստուրուայի անվան գործարանը 3,350 տոնն,
ՏՏԿ-ի գործարանը 23 հազար տոնն,
Բուդյոննու անվան գործարանը 2,450 տոնն,
Ջափարիձեյի անվան գործարանը 100 տոնն,
Բաթումի նավթաթոր գործարանը 5000 տոնն,

Ընդամենը 82,111 տոնն.

Շահումյանի գազային գրասենյակը պետք է նավթաթոր գործարաններին անհրաժեշտ քանակությամբ գազ տա հեղուկ վառելիքի խնայողության համար.

Հանձնարարել Շահումյանի ռայկոմին՝ ընկ. Բեյենկու պատասխանատվությամբ՝ հսկել Շահումյանի ռայոնի գործարաններում վառելանյութի խնայողության հրահանգի իրագործմանը.

Արտեմի կղզու նավթահանքը, էլեքտրոկայանը գազիֆիկացիայի յենթարկելու միջոցով, պետք է 1500 տոնն հեղուկ վառելիքի խնայողություն տա. Գազիֆիկացիան ավարտել օգոստոսի 12-ին.

«Կարմիր Աստղ» և «Կրասին» էլեքտրակայանների գազամատակարարման ուժեղացման հաշվին գործածումը հասցնելով մինչև 90 տոկոսի, հեղուկ վառելիքի 23,000 տոնն խնայողություն տալ.

Հորերը լվանալու համար գործածվող նավթի քանակությունը կրճատել 18 հազար տոննով, քան պլա-



նով ընդունված է. Ազնեվթը պետք է նավթահանքերին ստուգիչ թիվ տա, Կալա-Սուրախանի 12 դյույմանոց առաջին գազանցքի շահագործման մտցնելու ժամկետը սահմանել օգոստոսի 10-ը.

Կալա—Սուրախանի 2-րդ 12 դյույմանոց գազանցքի կառուցման ավարտման ժամկետ սահմանել հոկտեմբերի 1-ը.

## IV

Նոր նավթահանքեր յուրացնելու համար կենսագործել հետևյալ միջոցառումները.

## ՄԻԿՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՆԱՎԹԱՀԱՆՔՈՒՄ (ԼՈԿ ԲԱՏԱՆ)

Նավթահանքի տերրիտորիայում ծովային ջրով մատակարարելու վեց դյույմանոց գլխավոր գիծը, ջրհանի 14 դյույմանոց ջուր ծծելու գծի կառուցումը և այնտեղ յերեք նասոս դնելը ջրային ամբարի մոտ, 2-րդ տղբեգատում նասոս սարքավորելու գործն ավարտել մինչև հոկտեմբերի մեկը.

Խմելու ջրի համար Բոյուկ-Դարայից մինչև Լոկ-Բատան մի ամսում 6 դյույմանոց ջրի գլխավոր գիծ անցկացնել. Նավթը հավաքելու համար գրուպպային ապարատուրաներ սարքավորել. 1700 տոնն տարողության նավթի ռեզերվուարների կառուցումն ավարտել. Լենինյան ռայոնից տեղափոխել և 3300 տոննանոց ռեզերվուարի 6 նասոսների համար շենքի կառուցումն ու սարքավորելն ավարտել մինչև նոյեմբերի 15-ը. Կոմպրեսորային կայանի շենք կառուցել ու սարքավորել 10 դյույմանոց կոմպրեսորներով, 4 օդաբաշխիչ տնակներ շինել և դրանց մինչև նոյեմբերի 15-ը միացնել կոմպրեսորային կայանի հետ.

Ավարտել դարբնոցների կառուցումը, սարքավորել այն և հորափոր դուրերը տեղում զոդելու գործը կազմակերպել մինչև սեպտեմբերի 10-ը։

Մինչև հոկտեմբերի 1-ն ավարտել մեքենայական ցեխի կառուցումը։

Մատնանշված ժամկետներում բոլոր սարքավորման և մեքենայական աշխատանքները կատարելու պատասխանատվությունը դնել Բուդյոննու անվան մեքենական արհեստանոցի վարիչ ընկ. Ե. Սիմոնյանի վրա։

Բոլոր կառուցողական աշխատանքները մատնանշված ժամկետներում կատարելու պատասխանատվությունը դնել կառուցողական գրասենյակի դիրեկտոր ընկ. Մազարովի և ընկ. Դանիելովի վրա։

Նավթահանքի ինարարության վերաբերող բոլոր աշխատանքների իրականացման պատասխանատվությունը դնել նավթահանքի դիրեկտոր ընկ. Կարտաշևի, կուսկոմի քարտուղար ընկ. Վարունցի և Համկոմկուսի (բ) Անդրյերկրկոմի կողմից ամրացված Անդրյերկրկոմի քարտուղար ընկ. Ամատունու վրա։

## ԿԱԼԱՅԻ ՈՐՋՈՆԻԿԻՁԵՅԻ ԱՆՎԱՆ ՆԱՎԹԱՀԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Մի ամսում ավարտել նավթահանքի տերրիտորիան ծովային ջրով մատակարարելու վեց դյույմանոց ողակային գլխավոր գիծը։

Ազնեֆթը (ընկ. Պետերսոն) և Բագխորհուրդը (ընկեր Բալախին) պետք է հինգ օրվա ժամկետում լուծեն խմելու ջրի բազայի հարցն այնպես, որ մինչև 3-րդ յեռամսյակի վերջն ապահովվի նավթահանքի նորմալ ջրամատակարարումը։

Առաջին հերթին, մինչև հոկտեմբերի սկիզբն ավարտել 2-րդ կիսամյակում ավարտվող հորերից նավթը հավաքելու, պահելու և սղելու գործը։

20 կոմպրեսորների համար կոմպրեսորային կայան կառուցել, 10 կոմպրեսոր դնել ու սարքավորել, 2 օդաբաշխիչ տնակներ շինել մինչև նոյեմբերի 15-ը։



Մինչև նոյեմբերի 15-ն ավարտել մեքենական ցեխի դարբնոցի կառուցումն ու սարքավորումը և տեղում հորափոր դուրերի զոդումը կազմակերպել։

Նշանակված ժամկետին բոլոր մոնտաժային և մեքենական աշխատանքների պատասխանատվությունը դնել Որջոնիկիձեյի նավթահանքի Ելեք. Մոնտ. Բաժնի վարիչ ընկ. Սկիտյայևի վրա։

Բոլոր կառուցողական աշխատանքները ժամանակին վերջացնելու պատասխանատվությունը դնել ընկ. Կարգինովի վրա (Որջոնիկիձեյի նավթահանքի կառուցողական գրասենյակ)։

Կալայում բոլոր կառուցողական աշխատանքները կատարելու պատասխանատվությունը դնել նավթահանքի դիրեկտոր ընկ. Բորցի, կուսկոմի քարտուղար ընկ. Սաֆար Հուսեյնովի, Ադրկոմկուսի (բ) ռայկոմի քարտուղար ընկ. Մուզաֆար Նարիմանովի, ամրացված կենտկոմի քարտուղար ընկ. Կուդրյավցևի վրա։

## ԱՐՏԵՄԻ ԿՂԶՈՒՄ ՆԱՎԹԱՀԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Խմելու ջրի մատակարարումը բարելավելու համար ջրաբաշխման սիստեմը սարքավորել նոր յեռացուցիչներով, սառցարաններով ու զտիչներով փոշիչ-բաշխիչներով ու մեծացնել նրա ջրային արտադրողականությունը։ Ժամկետ նշանակել մինչև հոկտեմբերի սկիզբը։

Կարգավորել կոլլեկտորային ցանցը մինչև նոյեմբերի 15-ը նավթի հավաքումն ու մղումն ապահովելու համար։

Տասը կոմպրեսորների համար շենք կառուցել և այնտեղ կոմպրեսորներ դնել մինչև նոյեմբերի 15-ը։

Հորափորման քառասուն ստանոկներ սպասարկել ու վերասարքավորել գոյություն ունեցող մեքենական բազան մինչև հոկտեմբերի սկիզբը։

Նորոգումն ավարտել մի ամսում—մինչև սեպտեմբերի 10-ը։

Կասպարին պարտավորեցնել, որ 10 օրվա ընթացքում՝ Արտեմի կղզին ապահովի տրանսպորտային միջոցներով, կարգավորել բեռները կղզի ուղարկելու գործը: Պատասխանատվությունը դնել ընկ. Մախիմովի վրա:

Բոլոր մոնտաժային ու կառուցողական աշխատանքները ժամանակին կատարելու պատասխանատվությունը դրվում է հանքի դիրեկտոր ընկ. Սուլեյմանովի և կուսկոմի քարտուղար ընկ. Լանինի վրա:

Նոր հանքեր կազմակերպելու և յուրացնելու աշխատանքների իրականացման ընդհանուր ղեկավարությունն ու պատասխանատվությունը դնել հանքային վարչության դիրեկտոր ընկ. Պետերսոնի վրա:

## V

Մինչև նավագնացության վերջը (մինչև նոյեմբերի 15-ը) Բաքվից նավթամթերքների արտահանումն ապահովելու և 34 թվի 20 միլիոն տոննի արտահանությունը նախապատրաստելու նպատակով—

Եյբաթից Լոկ-Բատան Ազնեվթի հաշվին, 300 հազար ռուբլու նախնական արժեքով մի ամսվա մեջ ինքնուրույն լայնագիծ յերկաթուղի անցկացնել 3 ու կես կիլոմետր յերկարությամբ, Անդրկովկասյան յերկաթուղիների վարչության վրա դնել աշխատանքի կատարումն ու կազմակերպումը և տեխնիկական ղեկավարությունը:

Ընդունել ի գիտություն Ազնեվթի պետի տեղապահ ընկ. Սյուցկու հայտարարությունը, որ մինչև նավագացության վերջը, յելնելով արտադրական ծրագրից, հաշվի առնելով պլանից դուրս 500 հազար տոնն նավթը ծովով ուղարկելը՝ կապահովվի:

Օգոստոսին 840 հազար տոնն.

Սեպտեմբերին մի միլիոն տոնն.

Հոկտեմբերին 1.100,000 տոնն:



Ընդունել ի գիտություն Կասպարի պետ ընկ. Մաքսիմովի հայտարարությունը, որ այդ փոխադրությունները նավերով լրիվին ապահովված են:

Ընդունել ի գիտություն Անդրկովկասյան յերկաթուղու պետ ընկ. Ռոզենցվեյգի հայտարարությունը, որ օգոստոս ամսվա փոխադրությունները լրիվ ապահովված են և հյուսիսային և թե հարավային ուղղությամբ, որ յերկաթուղու փոխադրական ունակությունը դեպի Բաթում սահմանված է ամեն օր 750 ցիստերն, նույնպես և որ 3,5 միլիոն տոնն փոխադրությունն Անդր. յերկաթուղով 1934 թ. լրիվ ապահովված է:

Հանձնարարել ընկ. ընկ. Ագրբայից, Ռոզենցվեյգից, Մաքսիմովից կազմված հանձնաժողովին, մի տասնօրյակում Ազրկոմկուսի (բ) Կենտկոմին ներկայացնել այս տարվա մնացած հինգ ամիսներում տրանսպորտի հետ կապված հետագա անհրաժեշտ միջոցառումները, նավթահանության ավելացման ու յեկող տարվա համար պատրաստվելու առնչությամբ:

## VI

Ամենակարճ ժամանակամիջոցում ապահովել Անդրերկրկոմի բանվորական ուժի հոսունության վերացման մասին տված հրահանգների իրացումը՝ նավթային տնտեսության բոլոր ճյուղերում:

Ազնեվթում բանուժի համալրման համար՝

Պարտավորեցնել Ադրբեջանի արհեստակցական միությունների խորհրդին (ընկ. Ռասուլովի պատասխանատվությամբ) 10 օրվա ընթացքում նավթարդյունաբերությունում աշխատելու համար պրոֆմիություններից 1000 անդամ ջոկել (ոչ նավթագործների միությունից):

Պարտավորեցնել Ադրլենկոմյերիտմիության Կենտկոմին ու Բաքկոմին (Գրիգորյանի, Բալա Բագիրովի

ու Լարիոնովի պատասխանատվությամբ), 20 օրվա ընթացքում նավթային արդյունաբերությունում աշխատելու համար մոբիլիզացիայի յենթարկել 700 կոմյերիտական։

Առաջարկել Ադրկոմկուսի (բ) Բաքկոմի քարտուղարությանը, ընտրել տասն օրվա ընթացքում ԱԿՆԻ-ի ուսանողներից 500 հոգի, 6 ամիս նավթարդյունաբերությունում աշխատելու համար,

Յերեք օրվա ընթացքում Ազնեֆթի արտադրությունն աշխատելու ուղարկել Բուդյոննայի կուսակտիվի կուրսերի ունկնդիրներից՝ 200 հոգի,

Հանձնարարել Ադրկոմկուսի (բ) Բաքկոմի քարտուղարությանը, 10 օրում մոբիլիզացիայի յենթարկել արդյունաբերության ուրիշ ճյուղերից, տնտեսություններից ու հիմնարկություններից 500 կոմունիստներ՝ նավթային արդյունաբերության մեջ աշխատելու համար։

Հանձնարարել Ազնեֆթին ու Ղուբայի կուսակցության ռայկոմին, ընկ. ընկ. Գուլիևի և Դ. Գաջալովի պատասխանատվությամբ՝ հավաքագրել Ազնեֆթի համար Ղուբայի ռայոնից մի ամսվա ընթացքում 300 բանվոր։

Հանձնարարել Հայաստանի Կոմկուսի (բ) Կենտկոմին՝ Զանգեզուրից մի ամսում 300 բանվոր հավաքագրել Ազնեֆթի համար,

Հանձնարարել Ազնեֆթին և Ի. Լ. Ղարաբաղի մարզկոմին՝ մի ամսում Լ. Ղարաբաղից հազար բանվոր հավաքագրել։

Պարտավորեցնել Ադրկոմկուսի (բ) Աղիզբեկովի ու Կիրովի ռայոններին (Ջաֆարով և Շուքյուրլու) Ազնեֆթի համար 20 օրվա մեջ ապահովել 300 բանվորների հավաքագրումը, քաղաքամերձ գյուղերից։

Բանուժի հավաքագրումը կատարել առաջին հերթին Ազնեֆթի նախկին բանվորների հաշվին (հորափորներ, արգելակողներ և այլն)։



Պարտավորեցնել ընկ. ընկ. Բարինովին, Հասան Ռահմանովին ու Կատկովին յերեք օրվա մեջ մշակել և Ադրկոմկուսի (բ) Կենտր. Կոմիտեյի և Բաքվի Կոմիտեյի բյուրոն մտցնել բանուժն ընդունելու և կուլտ-կենցաղային սպասարկումն ապահովելու և նոր յեկած բանվորներին տեղավորելու միջոցառումների օրացույցային աշխատանքը։

Ընկ. Հասան Ռահմանովին 10 օրով ազատել այլ աշխատանքից և նրա վրա դնել պատասխանատվությունը Համ. Կ. (բ) Կ. Անդրյերկրկոմի, Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի ու Բաքկոմի առաջ Ազնեֆթի համար բանուժ հավաքագրելու նկատմամբ՝ այդ բոլոր խնդիրները կատարելու և նրանց ընդունելությունն ու կանոնավոր օգտագործումն ապահովելու համար։

Նախապատրաստված բանուժով հորափորման ընդարձակ տարածությունն ապահովելու համար (լրացուցիչ կերպով 510 հորափոր և 560 արգելակող) ընկ. ընկ. Գուլյաևի ու Հասան Ռահմանովի պատասխանատվությամբ ձեռք առնել հետևյալ միջոցները։

Հորափորման կադրերի կազմում ներքին տեղափոխություն կատարել առանց արտադրությունից կտրվելու՝ կարճատև ուսուցման լայն ցանց կազմակերպելով այն հաշվով, որ հորափորների պահանջը ծածկվի ավելի փորձված արգելակողներից, իսկ այս վերջինների պահանջը՝ կուրսերն անցած հորափոր պարտիաների ավելի փորձված բանվորներից։

Ազնեֆթի կողմից արտադրության մեջ քաշված ու դեմոբիլիզացիայի յենթարկված կարմիր բանակայինների թվից ստորին օղակներում կազմակերպել լրացուցիչ բանվորական կուրսեր արգելակողների և հորափորների նախապատրաստումը յերեք և վեց ամսով։

Վերոհիշյալ կուրսերից և նոր հավաքագրված բանվորներով (ռայոններից)՝ հորափորներով ու արգելակողներով համալրված բրիգադներին ամրացնել փորձված բարձր վորակի հորափորներ ու հորափոր վար-

պետներ, որ սիստեմատիկ կերպով արտադրական հրահանգներ տան, վերջիններիս համար հատուկ վճար սահմանեն։

1933 թվին բարձրագույն դպրոցներն ու տեխնիկումներն ավարտողներին, նաև հանքային տնտեսության գծով ավարտող ինժեներներին ու տեխնիկներին պարտադիր կարգով հորափորման բրիգադում ստաժորության յենթարկել՝ նպատակ ունենալով նախապատրաստել խոր հորափորման փորողներ և հորափոր վարպետներ։

Հանձնարարել Ազնեֆթին (Գուլյաևի պատասխանատվությամբ) մշակել պլան՝ նորոգողներ նախապատրաստելու, վոր հորափորմանն ու շահագործմանն սպասարկեն։

Հանձնարարել ընկ. Գավերմանից (նախագահ) Մուստաֆաևից, Բաբաևից, Զեյնալովից, Կատկովից ու Սաիպովից կազմված հանձնաժողովից՝ մի ամսում ստուգել Անդրյերկրկոմի ու Ադրկոմկուսի (բ) Բագկոմի վորոշումը Ազնեֆթի ապարատը վերակազմելու և ինժեներ-տեխնիկական անձնակազմին փոխադրելու մասին Ծանր Արդյունաբերության Ժողկոմի հրամանի հիման վրա՝ մշակել միջոցառումներ, աշխատավարձի վերաբերյամբ։

## VII

Նավթայինների մատակարարման գործում Բագվի ամբողջ կազմակերպության աճման հետևանքով ձեռք է բերվել նշանավոր տեղաշարժեր։

Վերջին ժամանակներս սկսել են աշխատել յերկու նոր խոհանոց-ֆաբրիկա, վորոնք կարող են ամենօր բաց թողնել մինչև 100 հազար բաժին ճաշ։ Ոգոստոսի մեկին գործի յե գցվել մեծ մսակոմբինատը։ Սկսել է աշխատել հացագործարանը։ Այս տարի քաղաքամերձ տնտեսություններից և բանմատակարարման վարչության սովխոզներից լրացուցիչ ռեսուրս բանջարեղեն կհավաքվի 35 հազար տոնն՝ անցյալ տարվա 15 հազար տոննի դիմաց։



Սակայն Համկոմկուսի (բ) Անդրյերկրկոմի քարտուղարությունը, Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի ու Բագկոմի բյուրոն՝ ամենայն վճռականությամբ շեշտում են, նոր բանմատակարարման ու հասարակական սննդի դրման գործում մի շարք խոշորագույն պակասություններ կան, վորպիսիք են—գյուղատնտեսական արտադրանքի միանգամայն անբավարար կացությունն (ամբողջ շրջանառության 4,3 տոկոսը), պարենային բազայի դեռ ևս անբավարար ծավալումը (ձկնորսության պլանը չի կատարվել), մսային ու արդյունաբեր անասունների բացարձակ անբավարար քանակությունը, մագազինների մեծ մասում խորհրդային կուլտուրական առևտրի թույլ կազմակերպումը (կոպիտ վերաբերմունք, հակասանիտարիա և այլն), հասարակական սննդի ցանցի մի մասի անբավարար աշխատանքը, դասակարգային խորթ ու գող տարրերով բանմատակարարման բաժինների ապարատի կեղտոտվելը (վատնումներ, կողոպտումներ և այլն), թույլ պայքար է տարվում ձրիակերների, պրոգուլ անողների ու լխտունների դեմ և անբավարար աշխատանք՝ ներքին ռեսուրսները մոբիլիզացիա անելու գործում,

Նավթագործներին, մանավանդ հեռավոր ու նոր նավթահանքերում մատակարարումն ավելի բարելավելու նպատակով գործադրել հետևյալ միջոցառումները.—

Ազնեֆթի բանմատակարարման վարչությունը մինչև սեպտեմբերի 1-ը պետք է յուրացնի ու վերանայի ապակենտրոնացած մթերումների համար ջոկված բոլոր ռայոնները, ամրացնի մթերման գրասենյակները և պարզագույն շինքերի կառուցում ծավալի (բազաների համար ծածկոցներ, վերամշակման կետեր և այլն)։ Սահմանել, վոր 3-րդ յեռամսյակին ապակենտ-

րոնացրած մթերումներն ու արտապլանային գնումները բանվորամատակարարման վարչության շրջանառության մեջ պետք է կազմեն առնվազն 35 տոկոս և 4-րդ յեռամսյակին՝ առնվազն 40 տոկոս։

Հորափորների, հեռավոր ռայոնների ու Բաթումի նավթաթոր գործարանների բանվորների մատակարարումն ուժեղացնելու համար Ազնեֆթի բան. մատակարարման վարչությանը բաց թողնել Բաքու բերած կարտոֆիլից 3000 տոնն լրացուցիչ կերպով։ Հանձնարարել ընկ. ընկ. Գուլբիսին յեվ Վասիլկինին վերանայել մատակարարման ֆոնդերը, առանձնապես բանջարեղենի, նավթագործների մատակարարումն ուժեղացնելու նպատակով։

Ժողկոմխորհի մթերման կոմիտեն Ազնեֆթի բան մատակարարման վարչությանը պետք է թույլատրի կենտրոնացված մթերումներ կատարել սկսած 33 թվի աշնան-ձմռան սեզոնից և ամբողջ 1934 թվի ընթացքում։

Ընկ. ընկ. Գուլբիսը, Վասիլկինը յեվ Ցուդովիչը պետք է միջոցներ ձեռք առնեն առաջիկա աշնան ու ձմռան սեզոնին Ազնեֆթի հիմնական բանվորներին տաք հագուստով ու վոտնամանով ապահովելու (կիսավերարկու, բանվորական վոտնաման, տաք սպիտակեղեն և այլն)։

Բանմատակարարման բարելավման գործում կարևորագույն խնդիր համարել ժամանակին ներմուծումներ կատարելը և կարտոֆիլ ու բանջարեղեն պահտալը. այդ գործի համար պատասխանատու դարձնել վոչ միայն Ազնեֆթի բանմատակարարման վարչությանն ու բանմատակարարման բաժիններին, այլ և հավասար չափով ռայկոմների քարտուղարներին, ռայխորհուրդների նախագահներին, Ազնեֆթի ձեռնարկների դիրեկտորներին և ձեռնարկների պրոֆկազմակերպություններին։



Ադրկոմկուսի (բ) Բաքկոմի քարտուղարությունը 10 որվա մեջ պետք է քննարկի նավթագործների յերեխաների մատակարարման բարելավման հարցը։

Միանգամայն անբավարար գտնելով դիֆերենցիալ մատակարարման աշխատանքը՝ առաջարկել բանվորական մատակարարման վարչության, հանքերի ձեռնարկների դիրեկտորներին և այդ հանքերի ու ձեռնարկների բանվորական մատակարարման բաժիններին.—

